Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԼԵՒՈՆ Բ.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՍՈՅ

ԴՅՒԻԹ Պ. ՍԱՐԳԻՍ ԲԻՆԿԵԱՆՑԻ

5448
5-448

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇԸ Թ. 19
= 1865 =

[illegible]

ՄԱՏԵՆԱՐԱՆ Թ. ԱՌՁԱՏԵԱՆ ի Թիւ.....

Ա. ՁՊ.

Անցեալին տխուր յիշատակը միշտ մարդուս մը-տաց վրայ ազդեցութիւն ունի եւ անկէ մարդիկ կրնան օգուտ քաղել։ Ինչպէս որ ներկան՝ ապա-գային ծնունդն է, նոյնպէս ալ անցեալը ներկային պատկերը կամ հայելին է՝ ուր մարդիկ իրենց նախ-նեաց վիճակը քաջ նշմարելով, անոնց յաւութիւն-ներէն կը խորշին եւ առաքինութեան կը հետեւին։

Ի սկզբանէ անոր մեր Ազգային պատմութիւնը մեր ընթերցման առարկան եղած էր, որուն մէջ մեր նախնեաց գործած քաջութեանց եւ վեհանձնու-թեանց վրայ զմայլած էինք, եւ ընդհակառակը Հայ նախարարաց Հայութեան, անարժան մատնու-թիւնը եւ անմիաբանութեան ապրակործան ոգին երբ կը կարդայինք եւ կը տեսնէինք՝ մեր աչքերէն արտասուաց գետակներ կ'երթային։ Ազգային պատ-մութեան մէջ Լեւոն Բ-ի մասը արտաչարժ ապաւո-րութիւն մը ըրած ըլլալով մեր վրայ՝ զայն ողբեր-գութեան ձեւով նկարագրելու ձեռք զարկինք հեան ալ թէպէտեւ ոչ իրօք նոյն ատենը պատահած, բայց իրականութիւն ունեցող ուրիշ պատմական դէպ-քեր կցորդելով։ Զեռագիր օրինակը քանի մը բա-ռեկամներս տեսնելով խրախուսեցին զմեզ որ 'ի լոյս ընծայենք։ Ակէ յորդորուելով՝ սոյն հրատա-րակութեան համարձակեցանք։ Կը յուսամք որ մէջը գտնուած թերութիւններուն ներողամիտ աչօք կը հայուի, եւ աւելի մեր զղացումը՝ քան թէ ճարտա-րութիւնը կը դիտուի սոյն Ողբերգութեան մէջ։

ԴԱՒԻԹ Գ. Ս. ԲԻՆԳԵԱՆՑԻ

ԱՆՁԻՆՔ

ԼԵՒՈՆ Բ. Թագաւոր Հայոց.

ՎԱՀԱՆ
ՌՈՒԲԷՆ
ՍԱՐԳԻՍ
ՍԱՀԱԿ
ԿԱՐԱՊԵՏ
ԳՐԻԳՈՐ
} Նախարարք Լեւոնի.

ՏԻԳՐԱՆ
ԱՐՇԱԿ
} Սպասաւորք Լեւոնի.

ՊԱՀԱՊԱՆ ՁԻՆՈՒՈՐՔ.

ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍ. Կայսր Յունաց.

ՊԵՐԻԿԼԷՍ. Պալատական Մագսիմիանոսի.

ԷԼԻԶԱ. Դուստր Մագսիմիանոսի եւ սիրուհի Վահանայ

ՎԱՀՐԱՄ. Դեսպան Մագսիմիանոսի.

ԱՐԻՍՏՈՏԷԼ. Սպասաւոր Մագսիմիանոսի։

ԼԵՒՈՆ Բ.

ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

ԵՒ

ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍ ԿԱՅՍՐ ՅՈՒՆԱՑ

Մագսիմիանոս Յունաց կայսրը Հայոց թագաւորական իշխանութիւնը կուզէ Լեւոնին ձեռքէն յափշտակել. վասն որոյ դաւաճանութեամբ զԼեւոն իւր քովը բերել կու տայ՝ մէկ քանի Հայ իշխանաց մատնութեամբ եւ բռնութեամբ կ'առնու թագաւորական իշխանութիւնը անոր ձեռքէն եւ ինքը կը տիրէ Հայոց վերայ։

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԼԵՒՈՆ ԱՌԱՆՁԻՆ

Ո՛հ աղէտալի վայրկեան... եւ թշուառ վիճակ... դառն խորհուրդներ զիս կը տագնապեն։ Ահա կ'ստուգուի այն վճռական խօսքը թէ «թագաւոր մը չի կրնար երջանիկ ըլլալ՝ մինչեւ որ իւր ժողովուրդը երջանիկ չըլլայ»։

Ի՞նչ անզուգական փառք ուրեմն այն թագաւորին՝ որուն ժողովուրդը երջանիկ է։ Կարաեն թէ պէտք է որ թագաւոր մը խաղաղասէր ըլլայ, որպէս զի թէ՛ ինքը և թէ՛ իր ժողովուրդը երջանիկ ըլլայ։ Բայց սխա՛լ... այո՛ սխա՛լ այն առեն՝ երբ բռնաւորներն յանիրաւի կը դիմադրաւեն ընդդէմ խաղաղասիրաց...։

(Զէնոբը Խորէն Տրամանաց ՀԷՀ Յեռացուռնելով) Ի՞նչ մշանջենական խաղաղութիւն պիտի տիրէր աշխարհիս վերայ՝ եթէ իւրաքանչիւր տէրութիւն իր Հայրենի ժառանգութեամբ բաւականանար և փառատիրութեան ոգւոյ չի կուրանար... Ինչ. միթէ Յունաց Մագեդոնիան ամբարտաւան կայսրը՝ որ կուզէ Հայոց թագաւորական իշխանութիւնը ձեռքէս դաւաճանութեամբ մը յափշտակել՝ պիտի յաջողի՞ իր այն յանդուգն խորհրդոյն մէջ... քանի՛ քանի անգամ Հայաստանի լոյն և ընդարձակ սպարէզներն նեղ եկան այնպիսի վախկոտ դաշանեերուն՝ որք երբեմն յանդգնեցան փորձ փորձել Հայաստանի վերայ արշաւելու...։

Բայց ինչո՞ւ այսպէս առանձնացեր եմ... մէկը չի կա՞յ՝ որ զիս մխիթարէ... մխիթարութիւն մը...։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՎԱՀԱՆ, ՍԱՐԳԻՍ, ՏԻԳՐԱՆ

ՎԱՀ. Ան ի՞նչ ձայն էր որ պալատին սրահ-ներէն մէկուն մէջէն կը լսուէր. ի՞նչ կայ արդ-եօք... ո՛վ Աստուած... դիշեր ատեն ան ի՞նչ սրտառուչ ողբեր են...։

ՏԻԳ. Կարծեմ թէ Լեւոն արքային սրահէն ըլլալու են այս երգերական ձայնները. բայց...։

ՍԱՐ. (Խօսքը ընդհատելով) Գնա՛ հասկըցիր աղէկ մը ու շուտով վերադարձիր։

ՏԻԳ. Ահա՛ կերթամ (Էջը մը յառաջանալով կանգ կառնու ու ցած ձայնով կըսէ) Արքային սրահէն է, Արքային սրահէն։

ՎԱՀ. Ի՞նչ. ի՞նչ։

ՍԱՐ. (Ցածէն) Թո՛ղ որ երթայ աղէկ մը բանին ի՛նչ ըլլալը հասկընայ դայ. (առ Տիգրան) դնա՛ դնա՛ աղէկ մը հասկըցիր և՝ մեզի շիտակ լուր մը բեր։

ՏԻԳ. (Ցառաջանալով Լեւոնի սենեկին դիմացը կանգ կառնու եւ ցած դիրքով) Ո՛վ Աստուած... աս ի՞նչ զարհուրելի տեսարան է... ո՛հ կը տսկամ... ոսկրներուս մէջ մեծ տրտմի մը կզգամ... աս ի՞նչ թուղթ է Լեւոն Տէրոյն ձեռքը՝ որուն վերայ նայելով սրտառուչ ողբեր կարձակէ... (Կը վերադառնայ) Տեսա՛ր-ք իմ, մեծ երկիւղ մը տիրեց վրաս... դեռ ձեռքերս և ծունկերս դողի մէջ են...։

ՎԱՀ. (Ձեռքերը քանալով) Երկի՞նք . . . ։

ՏԻԳ. (Ինքնին ելած յեռացումով) Արիւնս երակաց մէջ սառեցաւ մնաց . . . ։

ՍԱՐ. Ո՛հ , ի՞նչ կայ , ըսէ՛ , շուտով զմեզ տարակոյսներէ ազատէ ։

ՏԻԳ. Քիչ մը յառաջանալով յանկարծ զարհուրելի տեսարան մը նշմարեցի՝ որ ինծի մեծ սարսափ մը տպաւորեց . . . ի՞նչ ապիսի տեսարան . . . ։

ՍԱՐ. Շարունակէ խօսքդ ։

ՏԻԳ. Ո՛հ , ի՞նչպէս շարունակեմ . . . ։

ՎԱՀ. Ըսէ՛ , ընցո՛ւր խօսքդ , Տիգրան, եթէ ոչ իշխանութեամբս՝ գէթ սիրով կաղաչեմ որ շարունակես խօսքդ ։

ՏԻԳ. Մէյմ՞ալ տեսայ որ Լեւոն արքայն ձեռքը թուղթ մը բռնած՝ քանի որ վրան կը նայէր՝ ևս առաւել արտառուչ ողբերն կաւելցունէր . ո՛հ , չեմ դիտեր թէ ան ի՞նչ թուղթ է՝ որ ի՞նչ բան արտին խորէն այնչափ հառաչանքներ արձակել տուաւ . . . ։

ՎԱՀ. Վերջապէս քեզի բան մը չըսաւ ։

ՏԻԳ. Ո՛չ . ինքը զիս չի տեսաւ . իրեն սենեկին դրան դիմացը կենալով զինքը դիտեցի ։

ՍԱՐ. Ուրիշ խօսք մը չըսաւ ։

ՏԻԳ. Վերջին խօսքերն ասանք էին . ամէկը չի կայ՝ որ զիս մխիթարէ . . . մխիթարութիւն մը . . .» ։

ՎԱՀ. Հա բա՛ն մը ըլլալու է . . . այո՛ , այո՛ , վատ՛նդ մը ըլլալու է ։

ՍԱՐ. Ուրեմն երթանք իրեն քով։

ՎԱՀ. Բայց մեզ նախարարներն ալ հետերնիս առնենք։

ՍԱՐ. (Ա՜ Տէրէրան) Շատ լաւ. դնա՛ կանչէ զանոնք ուրեմն որ Լեւոն արքային ներկայանան. ահա՛ մենք կերթանք։

(Երկուքին ոչկոտելով սենեակէն դուրս կելլեն)։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆԱԽԱՐԱՐՔ, ԼԵՒՈՆ

ԼԵՒ. (Նախարարներն ողջարերելով) Եկէ՛ք, եկէ՛ք, իմ սիրելի Նախարարներս։

ՆԱԽ. Ահաւասիկ ենք Տէ՛ր արքայ։

ԼԵՒ. Գիտէ՞ք, ինչո՞ւ համար զձեզ կոչեցի։

ՆԱԽ. Ձեր վեհ ճակտին խորհրդանշանէն և Ձեր կերպարանաց տխրութենէն կը դուշակենք՝ որ հոս մեծ վտանգ մը կայ. բայց... (առանձին) ո՞վ Աստուած...։

ԼԵՒ. Թո՛ղ ձեր երեսաց գոյներն չը փոխուին. քաջալերուեցէ՛ք, դեռ վտանգը հասած չէ և կը յուսանք որ ամենևին չի պիտի հասնի. բայց պէտք եղած զգուշութիւններն չի խնայենք. վտանգը չեկած պէտք է կասկածիլ և երկնչիլ. նա մանաւանդ ամեն զգուշութիւն 'ի գործ դնել. իսկ վտանգին հասած ատենը՝ զայն մերժել և ամենևին չի շուարիլ.

բայց վաճառք երկնից, դեռ վանդակ չի կայ. այլ փոքրիկ կայծ մը՝ որն որ եթէ չրով անմիջապէս չինջուցանեն վայրկեան մ'առաջ անոր առաջն առնելու չըլլան՝ մեծ բոցեր պիտի պատճառէ և մեր Հայկաղեան տունը պիտի այրէ։

ՆԱԽ. (Ամենքը ձեռքն ոտքը էյնալով) Ո՛հ, կաղաչեն՝ ամենքս ալ, ցէ՛ր արքայ, աճապարեցէ՛ք վայրկան մը առաջ վանդակը յայտնելու... ըսէ՛ք ... ցէ՛ր արքայ ... ըսէ՛ք ...։

ԼԵՒ. Մի՛ շտապիք, հաւատարիմ ծառայք. ձեր այդ հաւատարմութիւնը՝ զիս չափազանց կերպով կուրախացընէ և չէ թէ այսպիսի փոքրիկ վանդի մը՝ այլ և ամենամեծաց մինչև անդամ յաղթելու յոյս և քաջալերութիւն կու տայ ինձ... միշտ ձեզմէն այդ հաւատարմութիւնն և միութիւնը կը պահանջեմ. այս կերպով միայն պիտի կարենանք բոլոր արկածից և վտանգաց մէջ յաղթող և անպարտ հանդիսանալ։ Բայց ժամանակը չանցունենք և վայրկեան մը առաջ փութանք վտանգին առաջն առնելու. մոլիկ ըրէ՛ք ուրեմն որ ձեզ պատմեմ այս խնդրոյն ո՛ւրկէ ծագիլը և ի՞նչպէս ըլլալը։

ՆԱԽ. Պատրաստ են՝ ամենք լսելու։

ԼԵՒ. Դու՝ք ալ կը յիշէ՛ք որ անցեալ օր երկու ցոյն ճանապարհորդ անձին՝ եկան և ուղղակի ինձ ներկայացան։ Անոնք Մագսիմիանոս ցու-

նաց կայսեր պալատէն եկած էին և Պերիկղէս պալատականէն տա նամակը ինձ բերին՝ զոր ձեր ներկայութեան կընթերցնում, ամենուղ հաւատարմութեան վերայ վստահ ըլլալով։

(Կոկլոյ նամակը կարդալ)։

Վեհափառ Տէր.

Բաւական առենէ 'ի վեր է որ պատեհ ժամանակի մը կսպասէի՝ Ձեզ ուշադրութեան արժանի լուր մը հաղորդելու, սակայն դժբաղդաբար չի կարեցայ ունենալ. այժմ այս լուրը Ձեզ կը հաղորդեմ փոքրիկ նամակաւս։ Մեր՝ Յունաց Մագսիմիանոս կայսրը, միտքը դրեր է Հայոց թագաւորական իշխանութիւնը ձեր ձեռքէն առնել դաւաճանութեամբ մը. դրեթէ օր ըստ օրէ ոգի 'ի բռին ամենճիպ 'ի գործ կը դնէ՝ այս յանդուգն խորհուրդը յառաջացուցնելու։

Ուստի կը մնայ Ձեզ այսուհետեւ ամեն կերպով զգուշանալ, որպէս զի չըլլայ թէ թշնամւոյդ յաջողութեան տեղի մը տաք։ Մնամ

Վեհափառութեանդ

Խ. Ծ. ՊԵՐԻԿՂԷՍ Յ. Զ.

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՎԱՀԱՆ, ՌՈՒԲԷՆ, ՍԱՐԳԻՍ, ՍԱՀԱԿ, ԿԱՐԱՊԵՏ, ԳՐԻԳՈՐ, ԼԵՒՈՆ

ՎԱՀ. Կը լսէ՞ք կոր ընկերներ, կը լսէ՞ք . . . ի՞նչ անիրաւութիւն . . . ա՛խ երկի՞նք՝ դու վը-

ընժանդիր եղիր ընդդէմ բռնաւորին՝ որ կու-
զէ մեր քաղցր հայրենիքնիս՝ Հայաստան դե-
բութեան լծոյն տակ ճնշել . . . ո՞հ , Հայաս-
տա՞ն՝ այնպիսի վատ բռնաւորի՞ մը իշխանու-
թեան տակ . . . մեռնի՞նք ուրեմն , ընկերներ ,
և դէթ Հայաստան այնպիսի խեղճ և անտա-
նելի վիճակի մը մէջ չի տեսանք ։

ՌՈՒ. Ինչո՞ւ այդպէս յուսահատաբար կը խո-
սիս . ինչո՞ւ մեռնինք , մենք են.ք Հայաստանի
լուսաւոր Լահերն , եթէ մենք մարինք՝ Հա-
յաստան մթութեան վհին մէջ պիտի խորտու-
զուի երթայ . . . Հայաստան իր յոյսը՝ իրեն քաջ
և անվեհեր թագաւորին և մեր վրայ է դրած ,
եթէ մենք մեռնինք , Հայաստանի յոյսը՝ յա-
ճիւն պիտի փոխուի և ան տեսն առանց երկ-
բայութեան այն վատ և փառասէր Մադա-
միանոս բռնաւորը Հայոց վերայ պիտի իշխէ ։

ՍԱՐ. Ա՜յո՛ , անշուշտ դերի պիտի ըլլայ Հա-
յաստան եթէ մենք՝ յուսահատ կերպով շուա-
ռինք և ձեռքերնիս եկած ճիգն ու աշխա-
տանքն անոր խնայենք . . . մեռնի՞նք , այո՛
մեռնի՞նք , միայն թէ Հայաստան ազատենք .
զուր տեղը չիթ մը արիւն չի թափենք . այն ա-
րիւնը պահենք Հայրենեաց ազատութեան հա-
մար . ինձի համար , լաւ է դերեզման , քան
թէ Հայրենեաց դերութիւնն . . . ։

ՍԱՀ. Փառք երկնից . . . կը լսեմ , Տէր արքայ ,
ընկերներուս քաջալերութեան ազդու խօս-

քերն. ալ ի՞նչ տարակոյս կը մնայ յաղթութեան. բաւական է որ մեր արտերն Հայրենեաց սիրոյ կայծովն բորբոքուած ըլլան ... անշուշտ որ պիտի յաղթենք, այնպիսի վախկոտ բռնաւորին՝ որ դեռ մեր Հայոց տասերց վայրումը տեսած չէ։

ԿԱՐ. Քա՛չ ընկերք, մեզի համար միութիւն պէտք է, որպէս զի կարենանք այն վատ կայսեր յաղթել. այն վատ և փառասէր բռնաւորը չէր՝ որ քանի՛ քանի՛ անգամ դաւաճանութեամբ ուրիշ Ազգաց յաղթեց. եթէ յաղթութիւնը, արիութեան վրայ կայացած ըլլայ՝ միշտ պիտի յաղթուի այն վատ բռնաւորը. բայց անիկա լա՛ւ ևս ընտրեր դաւաճանութեան և փառասիրութեան տիտղոսներն իր վրայ կը բերեն և խարդախ միջոցներով և հնարքներով դիմացիններն ընկճելն, քան թէ արիութեամբ յաղթութեան պատկին ընդունել։ Բայց ի՞նչ օգուտ. Յունաց տրուած է դաւաճանութիւն և Հայոց մատնութիւն....։

ԳՐԻ. Կուխտեմ յանուն Աստուծոյ՝ և կերդնում պատուոյս վերայ՝ որ միշտ քաջ ընկերներուս հետ միաբան եմ։ Հո՛ս մեր արտերն պիտի փրկուին, հո՛ս մեր արիութիւններն պիտի բարգաւաքին, վերջապէս հո՛ս՝ այս վտանգին մէջ, ամեն բան պիտի յայտնուի։ (Խօսքը առ Լեան ընթացով ուղղելով) Ամենքնիս ալ քեզի հետ միաբան ենք, Տէր արքայ, ամենքնիս ալ պատ-

բաստ են.ք .քուկին և Հայաստանին համար մեր արիւնը թափելու . .քաղցր է մեզ , հայրենեաց և վեհագն թագաւորի մը համար արիւն թափելն ։

ԼԵՒ. Միշտ զմեզ այդպէս տեսնամ , սիրելի և հաւատարիմ Նախարար.ք . դայլ.ք ուրեմն , հանդատացէ.ք և միշտ Հայաստանի ազատութեան վրայ մտածեցէ.ք . Հրաման որ այս խօսքերը Պալատէն դուրս ելլայ և հասարակութիւնը խռովի . դու.ք ամենքնիդ ալ արթուն կեցէ.ք և հսկեցէ.ք ժողովրդոց վերայ . վերջապէս կազմ և պատրաստ եղի.ք որ Հրամայ թէ յանկարծակի թշնամին մեր վրայ յարձակի առանց դեսպան ուղարկելու ։

ՆԱԽ. (Մէջքան) Այո՛ , միշտ պիտի մտածենք թէ՛ Հայաստանի և թէ՛ Ձեր անձին փրկութեան վրայ . մենք զմեզ Ձեր ազատութեան զոհ պիտոր ընենք . (Ժամանակաւորապէս) կեցցէ՛ Լեւոն Արքայ . (Ոչինչ) ։

ՏԵՍԱՐԱՆ Ե .

ԼԵՒՈՆ

ԼԵՒ. (Առանձին) Ահաւասիկ Նախարարներս տեսայ և զանոնք ալ փորձեցի որ հաւատարիմ են և հայրենեաց ազատութեան համար մեռնելը լաւ կը սեպեն , քան թէ իրենց հայրեն-

եւոյ գերութեան վիճակին մէջ ապրիլը։ Ա-
սակէ անդին ի՞նչ յաջողութիւն կրնայ ըլլալ.
բայց վրաս նուաղում մը կու գայ, քիչ մը նեն-
ջեմ և հանգստութիւնս գտնամ... ի՞նչ ա-
նոյշ քուն է որ վրաս եկաւ... իրաւ են ըսեր
թէ քունը մարդուս երկրորդ մխիթարութիւնն
է... (կը ննջէ եւ պահ մը դնանալէն վերջը երգելն դէջ կը
պօռայ) «ո՞վ են ատոնք որ վրաս կը յարձը-
կին... ատոնք ինծի ծանօթ կերեւան... բայց
... այո՛ ծանօթ կերեւան ինծի՝ ու չեն ուզեր
յայտնել... ո՛վ Աստուած... աս ի՞նչ զար-
հուրելի տեսարան է... կը տարտափիմ... ա-
յո՛, այո՛ ճանչցայ, մէկը՝ Մաղսիմիանոսն է...
բայց քովիններն ալ Նախարարներէս երկուքը՝
Վահան և Սարգիս կը թուին... անոնք՝ անոր
հետ ի՞նչ գործ ունին... ո՜հ մեծ տարակոյսներ
գիս կը շփոթեն» («Ընաքեանց») Արդեօք այս ի՞նչ
երազ էր որ տեսայ. վայ ինծի... վայ իմ հայ-
բենեացս, որ տեղի տուի թշնամւոյս՝ որ չար
խորհուրդներն իրեն մտաց մէջ անուց և հի-
մակ ալ կը ջանայ կատարելու...։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԼԵՒՈՆ, ՎԱՀԱՆ

ՎԱՀ. Տէ՛ր Աբքայ, Մաղսիմիանոս կայսեր
դեսպանը կուզէ ձեզ ներկայանալ։

ԼԵՒ. Վա՛յ, տեսրէն բռնաւո՛ր... այսպէ՞ս յանկարծակի՞ կուզէ ինծի յաղթել և Հայաստան իրեն իշխանութեան տակ ճնշել... վա՛ռ բռնաւոր, տեսնա՛ն.ք թէ յաղթութիւնը որո՞ւ է. գնա՛, վահան, ըսէ անիրաւ կայսեր դեսպանին որ ներկայանայ ինձ։

ՎԱՀ. Ա՛հա կերթամ կանչելու. (Գնէ)։

ԼԵՒ. (Ա՛ռանձին) Տեսնանք թէ՛ ի՞նչ լուր պիտոր բերէ Մաղսիմիանոսէն, իրեն հետ նախ քաղցր և հանդարտութեամբ խօսիմ՝ որպէս զի բերնէն մէկ քանի խօս.ք դրամ... բայց ահաւասիկ կու գայ. երթամ դահս նստիմ։

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԼԵՒՈՆ, ՎԱՀՐԱՄ

ԼԵՒ. Քա՛ջ իշխան, բարի եկար, ի՞նչ լուր բերիր քու տիրոջմէդ։

ՎՀՐ. Արդարութեան լուր։

ԼԵՒ. Բայց նա՛խ մտածէ՝ և յետոյ խօսէ։

ՎՀՐ. Արդէն մտածած եմ, խօս.քը իմն չէ, այլ Մաղսիմիանոս հզօր կայսեր։

ԼԵՒ. Պատրաստ եմ լսելու. ուրեմն խօսէ՛։

ՎՀՐ. Մաղսիմիանոս կայսրը իմ բերնովս արդարութիւնը՝ քեզ կըսէ։

ԼԵՒ. Ի՞նչ է արդարութիւնը։

ՎՀՐ. Արդարութիւնը այն է՝ որ իւրաքանչիւր ոք իրեն կարողութիւնը ճանաչէ և ըստ այնմ իշխանութեան տէր ելլայ։

ԼԵՒ. Այդպէս ելլալուն տարակոյս չի կայ։

ՎՀՐ. Ուրեմն ինչպէ՞ս կը համարձակիս զքեզ Հայոց թագաւոր կոչել... ո՞վ տուաւ քեզի թագաւորական իշխանութիւնը։

ԼԵՒ. Արիւն՝ օրէնք և արդարութիւն։

ՎՀՐ. Այն քու ըսած արդարութիւնդ՝ որ զքեզ դահիճ բարձրացուց՝ սխալ է... այն՝ արդարութիւն չէ, այլ անիրաւութի՛ւն... անօրէնութի՛ւն...։ Ճշմարիտ արդարութիւնը կը հրամայէ՝ որ դու դահէդ վար իջնաս և զայն Մաքսիմիանոս կայսեր յանձնես։ Գիտցած եղիր, Տէ՛ր իմ, որ եթէ կայսեր այս դաշինքը յանձն չառնես, երկու ազգայ մեծ արիւնհեղութեանց պատճառ պիտոր ելլաս. դու իմ խօսքիս մտիկ ըրէ՛, եթէ սիրով ընդունիս կայսեր դաշինքը՝ անիկայ զքեզ դարձեալ քու պատուդ մէջ կը պահէ իր պալատին մէջ։

ԼԵՒ. Վահրամ, անօրէ՛ն կայսեր՝ անօրէն իշխան. գիտցի՛ր որ Հայոց թագաւորին հետ կը խօսիս... անիրա՛ւ աչքէս հեռացի՛ր շուտով. դնա՛ քու Տէրոջդ՝ անօրէն և դաւաճան Տէրոջդ ըսէ որ Հայոց՝ Լեւոն թագաւորը, միւսներուն չը նմանիր. ըսէ՛ որ երկուքնուս մէջ տեղ արիւնահեղ պատերազմ կայ... միայն

թէ զմեզ գերեզման իրարու հետ պիտի կա-
րենայ հաշտեցունել. լսեցի՞ր, գնա՛, պատմէ՛։

Ղ.ՀՐ. (ՄԵԿՆԵԼՈՎ) Քիչ մը ժամանակ վերջը ա-
մեն բան կը յայտնուի... քիչ մը սառնէն եւ.քը
պիտի տեսնաս թէ՝ առանց պատերազմի ի՞նչ-
պէս Հայաստան գերի պիտի ըլլայ, այո՛, այո՛,
պիտի տեսնաս թէ այն հպարտ եւ գոռոզ Հա-
յաստանը ի՞նչպէս գերու թեան լծոյն տակ պի-
տի ճնշուի։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Լ Ե Ի Ո Ն

ԼԵԻ. (Ա-ՈՒՆՅԻՆ) Ո՞Հ երկի՜նք... ո՞Հ արդա-
րութի՛ւն... երկի՜նք՝ երբ այս անիրաւ խօս-
քերը կը լսես, ի՞նչպէս քուկին ձեռաց մէջի
շանթերը՝ այն վատ եւ փառասէր բռնաւորին
գլխոյն վերայ չե՛ս թօթափեր։ Վա՜խ՝ որ արդ-
արութի՛ւն, արդարութի՛ւն ըսելով խաբուե-
ցայ։ Հիմակուան դարուս մէջ պէտք է որ ամեն
մարդ դաւաճանութիւնն և բռնութիւնն ձեռք
առնէ, որպէս զի կարենայ հանդիստ ապրիլ,
իսկ խղճի մասին՝ միշտ անհանդարտ։ Արդեօք
այսպիսի դաւաճան և վատ բռնաւորներն յա-
ւիտենականութիւնն ամենեւին միտք չե՞ն բե-
րեր. չե՞ն յիշեր միթէ հանդերձեալ աշխարհ-
քին փառքը... բոլորովին ուրացած են...
պարսեմե՛ն.քա... (Յետոյ ճակատին դրած պահ մը մտածե-

ին վերջը, պանգոնը կը պարնէ և նախատրանքներն կը կանչէ)։

ՎԱՀ. Եւ ՍԱՐ. Ահաւասի՛կ ենք, Տէ՛ր։

ԼԵՒ. Գնա՞ց, չէ լմէ հոս է դեռ, այն անօրէնն դեսպանը։

ՎԱՀ. Դե՛ռ հոս...։

ՍԱՐ. (Գաղտնօրէն ցած ձայնով Վահանին կըսէ) «Գնա՛ց, գնա՛ց» ըսէ՛։

ՎԱՀ. Տէ՛ր արքայ, հա՛ս էր քիչ մը առաջ, բայց գնաց։

ԼԵՒ. Ձեզի հետ ի՞նչ խօսք կընէր։

ՎԱՀ. Ցունաց՝ Մաղսիմիանոս կայսրէն մեզի մէկ նամակ...։

ՍԱՐ. (Ցած ձայնով) Վահա՛ն, խելքդ կը կորսընցնե՞ս, կարէ՛ ձայնդ շուտով, կարէ...։

ԼԵՒ. (Ս. Վահան) Շարունակէ խօսքդ, Վահա՛ն, ինչո՞ւ կտրուկ կտրուկ կը խօսիս, հոս բան մը կայ, բայց...։

ՎԱՀ. Ո՛չ, Տէր արքայ, ի՞նչ կրնայ ըլլալ։

ԼԵՒ. Հապա ինչո՞ւ խօսքդ կէս թողուցիր և չես շարունակեր։

ՎԱՀ. Ի՞նչպէս շարունակեմ... ան պիտի կը դիմանայ, Տէր արքայ, երբ հայրենեացս վը-տանգը ակներեւ նշմարեմ։

ԼԵՒ. Խօսքերդ մէջ ուրիշ բան մը կը նկատեմ, Վահան, հոս դատանք մը կայ՝ զոր չես ուզեր յայտնել, բերնէդ «նամակ» բառը թը-ռուցիր և հիմայ ալ կուզես ինձմէ պահել...։

ՍԱՐ. (Ս. Լեւոն) Տէր արքայ, մի՛ տարակու-

ութ, բան մը չի կայ. արդէն վահան իշխանը քիչ մը թոթոմելով և կարուկ կարուկ խօսելով, շատ անգամ խօսքը թերի կը թողու և անով շատերուն ալ տարակուսանաց տեղի կուտայ. բայց ապահով կընեմ զՁեզ Տէր իմ, որ ամենեւին դաղտնիք մը չի կայ. մեռնք ամենքնիս ալ մեր սրտերն Ձեզի նուիրած ենք, ձեզմէ դաղտնի ի՞նչ կրնանք պահել։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Բոլոր նախարարները ամբողջ պալատին մէկ սրահին մէջ կը տաշտին ու Վահրամ Դեղապանին հետ կը խորհրդակցին։

ՎՀՐ. (Վահանայ ետ Սարգիսի կողմէ) Քա՛ջ իշխանք, թագաւորին քովէն կուգաք, չըլլայ թէ բան մը խմացուցած ըլլաք։

ՍԱՐ. Ո՛հ, սիրաս դեռ դողի մէջ է, քիչ մընաց որ ամեն դաղտնիք պիտի խմանար Լեւոն։

ՎՀՐ. Ի՞նչ, ի՞նչ կըսես, ինչպէս եղաւ՝ որ պիտի խմանար։

ՍԱՐ. Քիչ մը առաջ, Լեւոն դիս և Վահան իշխանը կանչեց իրեն սենեակը և մեզ հարցուց թէ «Ցունաց կայսեր դեսպանը դնաց» Վահան ալ հոս ըլլալնիդ պիտի խմացունէր և տարակոյսներու տեղի պիտոր տար. բայց ես կամացուկ մը ձեւով և ցած ձայնով ըսի որ «դնաց, դնաց» ըսէ, նոյնպէս նաև ձեր մեղի բերած

նամակներդ ալ պիտոր յայտնէր, բայց անմի-
ջապէս զայն ըռեցուցի, և շուտով մը մէջ տեղ
ուրիշ խօսք բերի և դրեթէ թագաւորը չի կըր-
ցաւ բան մը իմանալ։ Եւ Լեւոն թագաւորին
բնութիւնը առաջուընէ՝ իրեն զինուորութեան
տեսնն ալ փորձած եմ, շատ պարզամիտ է և
անմիջապէս ալ չի կրնար այդպիսի դաղտնեաց
խելամուտ ըլլալ։ Ինքը միշտ մեր բաժին հա-
ւատ կընծայէ, և քանի՛ քանի՛ անդամ ալ ին-
քը մեր՝ իրմէն պահած դաղտնիքներնիս ալ ի-
մացած է, բայց ամենեին տատած կամ յան-
դիմնած չէ։ Վերջապէս շատ խիստ բնաւո-
րութիւն չունի և պարզամտութեան կողմանէ
դրեթէ ամենն ալ կը դերազանցէ։

ՎՀՐ. Ուրեմն մեր խորհուրդներն յաջող-
թիւն պիտի դտնան։

ՆԱԽ. (Մէջէն) Ի՞նչ են ձեր խորհուրդները,
քիչ մը առաջ միայն թէ Կայսեր մեզի ուղար-
կած նամակը ըսի՛ք՝ ապապրելով որ Լեւոնի չի
յայտնեն.ք, բայց ի՞նչ նիւթի վրայ ըլլալը և
կամ Կայսեր ի՞նչ դիտաւորութիւն ունենալը
չի յայտնեցի.ք. եթէ կը հաճի.ք, ըսէ՛ք։

ՎՀՐ. (Նամակը էրպանէն հանելով) Ահաւասիկ Կայ-
սեր՝ առ Ձեզ ուղարկած նամակը, զգուշա-
ցէ՛ք որ թագաւորը վրայ չի դայ որպէս զի զայն
'ի ներկայութիւն Ձեր ընթեռնում։

ՆԱԽ. Սկսեցէ՛ք կարդալու Կայսրէն բերած
նամակնիդ, արդոյ դեսպան։

5448

ՎՀՐ. Պատրաստ է.ք.

ՆԱԽ. Այո՛ պատրաստ են.ք լսելու։

(Կանչեն հրդեհ համակը)։

Մագսիմիանոս՝ Յունաց Կայսրէն Հայոց նախարարներուն շատ ողջոյն։

Արդոյ Նախարարք.

Ձեր սիրելութեան կը ծանուցանեմ որ այս օրերս մէկ քանի տէրութիւնք պատրաստ են Հայաստանի վրայ արշաւելու եւ զայն տակնուվերայ ընելու. բոլոր այս արիւնհեղութեանց առջեւն ուզելով առնել՝ Դեսպանս խրկեցի Լեւոն Թագաւորին, որ սիրով յանձն առնէ իմ առաջարկութիւնս. բայց ուրքան որ այս առաջարկութիւնը իրեն ըրի, սակայն քաջ գիտեմ որ անիկա յանձն չպիտի առնէ. ուստի եթէ դուք զինքը այս օրերուս մէջ ինծի մատնէք, մեծ խաղաղութեան պատճառ պիտոր ըլլաք եւ ձեր ուզածէն աւելի վարձատրութիւն պիտոր գտնաք ինծմէ։

ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍ
ԿԱՅՍՐ ՅՈՒՆԱՑ

ՏԵՄԱՐԱՆ Դ.

ԼԵՒՈՆ, ՆԱԽԱՐԱՐՔ, ՊԱՀԱՊԱՆ ԶԻՆՈՒՈՐ

ԼԵՒ. Ո՞ւր է.ք նախարարներ։

ՊԱՀ. ԶԻՆ. (Նախարարներուն սենեակը մտնելով) Ա՛լ.քայն զձեզ կը կոչէ, Տեար.ք, հրամայեցէ.ք։

(Նախարարներն կը շփոթին)

ՍԱՐ. Ո՞վ, ո՞վ կուզէ արքայն։

ԶԻՆ. Զձեզ, Տեարք իմ, զձեզ կուզէ։

ՎԱՀ. Ո՛հ, չըլլայ թէ բան մը իմացած ըլլայ։

ՌՈՒ. Արդեօք իմացա՞ւ (Յեռոէը գլխուն զարնելով)։

ՍԱՀ. Տեա՛ք, տարակուսանաց տեղի տըւ։

ԿԱՐ. Ալ ասկէ վերջը, բանի մը յաջողութեան կապասե՞նք։

ՊԱՀ. ԶԻՆ. Աճապարեցէք, Տեա՛ր, Արքայն ձեզ կապասէ։

ՆԱԽ. (Ադեռոէը ձեկէն պահապան գինուորին) Ի՛նչ որ կուզես, կը խոստանանք քեզ տալու. միայն թէ մեր դաղտնիքնիս արքային չի յայտնես. չըլլայ որ բերնէդ փախցունես թէ «Յունաց կայսեր դեսպանը Նախարարներուն սենեակն էր»։ թէ որ Լեւոն արքայն անոր խօսքն ընէ, ըսէ թէ «դնաց անիկայ, դնաց»։

ՊԱՀ. ԶԻՆ. Տեա՛ր, դու՛ք Արքային ներկայացէ՛ք, այդ մասին հոգ մ՚ընէք։

ՆԱԽ. (Թագաւորին աչքերուն կը մտնէն) Ահաւասիկ ենք, Տէ՛ր արքայ։

ԼԵՒ. Նախարարներ, հիմակուան ամեն մէկ վայրկեաններն տխուր կերեւան ինծի... ո՛հ, ի՞նչ տարակոյսներ զիս կըմբռնեն... դեռ անօրէն կայսեր դեսպանը ճամբան է... դեռ լուր չի տարաւ առ խուժադուժ կայսրն... ո՞ըչափ պիտի զայրանայ արդեօք այն վատ

գաղանը՝ երբոր լսէ թէ իրեն խնդիրքը յանձն չեմ առեր . . . ։

ՎԱՀ. (Խօսքը ընդհատելով) Յանձն առնելո՞ւ խնդիրք է, Տէր իմ, ո՞վ յանձն կառնէ դերութիւնը . . . մի միայն այնպիսի վատ բռնաւորի մը կը վայելէ դերութիւնն և տարկութիւնը ։

ՍԱՐ. Անհոգ եղի՛ք, Տէր արքայ, յաղթութիւնը մերն է, միայն թէ խօսքէ անորը . . . գործքով և ոչ բան մը կարող է կատարելու ։

ԿԱՐ. Անտարակո՛յս ։

ՍԱՀ. Հոգ մի՛ ընէք Տէր արքայ, մենք ամենքնիս ալ՝ ամբողջ չորս հինգ ժամ է, որ սենեակ մը քաշուելով կը խորհէինք այս բանին վերայ ։

ԼԵՒ. Ի՞նչպէս վճռեցի՛ք ուրեմն ։

ԿԱՐ. Այո՛, բաւական ատեն խորհեցանք, բայց վճիռ մը չի կարեցինք ։

ՍԱՀ. Վճիռը ձերն է, Տէր արքայ. ի՛նչ որ կը հրամայէք, պատրաստ ենք ամենքնիս ալ կատարելու ։

ԼԵՒ. Ողջոյնք, հաւատարիմ պաշտօնեայք. ահա դիշերը վրայ կը հասնի, դնացէք և հանդստացէք, վաղը այդ նիւթին վերայ երկարօրէն կը խօսինք ։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՎԱՀՐԱՄ, ՍԱՐԳԻՍ, ՎԱՀԱՆ, ԿԱՐԱՊԵՏ, ՍԱՀԱԿ, ՌՈՒԲԷՆ, ԳՐԻԳՈՐ

ՎՀՐ. (Ա. Նախարար) Քաջ իշխաններ, ինչո՞ւ այդչափ ուշացաք։

ՍԱՐ. Թագաւորին սրահն էինք և այնչափ ժամանակ ուշանալիս ուրիշ բանի համար չէր, բայց եթէ արքայն մեր հաւատարմութեան վերայ ապահով ընել և տարակոյսի մը տեղի չի տալ։

ՎՀՐ. Շատ լաւ. ուրեմն հիմայ դուք ի՞նչ պատասխան պիտի տաք Կայսեր նամակին. պէտք է որ դիշեր ատեն ճանապարհորդ ըլլամ՝ որպէս զի իրեն՝ դեռ հոս ըլլալս չի յայտնեն։

ՎԱՀ. Խօսեցէ՛ք ուրեմն, ընկերներ, ժամանակը պարապ չանցունեն. դուք ի՛նչ որ վճռէք՝ ես ալ ձեր հետ եմ։

(Ամենքը միաբերան կայլայլեն և ապշած մէկմէկու կը հային)։

ՎՀՐ. Ինչո՞ւ չիսոսեցաք և ապշեցաք, քա՛ջ Նախարարներ. մինչեւ ցարդ եռանդուն կերպով ամեն բան յաջողեցուցի՛ք ու հիմայ ամենքնիդ ալ թուլցած կերևուա՛ք...։

ՆԱԽ. (Խօսքը ընդմիջելով) Ո՛չ, ի՞նչ կայ թուլնալու։

ՎՀՐ. Հապա, ինչո՞ւ նամակին պատասխանը չէ՞ք ըսեր։

ՍԱՐ. (Ա. Նախարար) Ինչո՞ւ չէ՞ք խօսիր, քաջ

ընկերներ. ինչո՞ւ համար ամեն.քնիդ ալ ըրիկ ճնչիկ մէկմէկու կը հայի.ք. ի՞նչպէս կուզէ.ք. ի՞նչպէս վճռեն.ք և կամ ի՞նչ պատասխան տան.ք Մագսիմիանոս կայսեր նամակին։

ԿԱՐ. Ի՞նչ պատասխան պիտոր տան.ք. ի՛նչ որ կայսրը առաջարկած է պիտի կատարեն.ք։

ՍԱՀ. Ընկերնե՛ր, մտիկ ըրէ.ք որ ըսեմ. չըլլայ թէ երկդիմի միտ.ք ունենա.ք. հոս՝ հիմայ ամեն բան պիտի վճռուի. ամեն մարդիրեն կարծի.քը ըսելու ազատ է. ես այսպէս կը վճռեմ որ ամեն.քս ալ կայսեր առաջարկութիւնը վաղ ընդ փոյթ՝ առանց դադրանի.ք մը իմացուներու կատարեն.ք...։

ՌՈՒ. (Խօսելը ընդհնչեալ) Մոռնա՞ն.ք ուրեմն, մէկ վայրկեանի մէջ, մեր բարեխնամ ար.քային այնչափ երախտի.քն... այսչափ ժամանակ՝ մեր սրտերուն մէջ տեղի ունեցած հայրենեաց քաղցը և անզուգական սիրոյ կայծը պիտի չի՞ չուցանե՞ն.ք միթէ... քա՛ւ լիցի... ես այդպիսի եղեռնագործութեան մը ձեռնամուխ չեմ ըլլար... ի՞նչ, Հայրենի.քնի՛ս՝ մեր քաղցը Հայաստա՞ն, ցունաց Մագսիմիանոս կայսեր դերի ընել... մեր աննման Լեւոն թագաւո՛րը այն բռնաւորին մատնել... (պոռալով) Ո՛հ, ինչ վատութի՛ւն և ինչ ապերախտութի՛ւն... դեռ Հայաստանի օ՛դը կը ծծեն.ք... դեռ անոր սննդարար ջո՛ւրը կը խմեն.ք... ո՛հ, ի՞նչպէս պիտի կարենա.ք մէկէն՝ ի մէկ ձեր

Հայրենիքը ուրանալ... անոր կաթոլիկ անուն դառնաք, անոր համար ծնեցաք, անոր համար իշխան եղաք, անոր համար միայն, անոր ազատութեան համար միայն ծնեցանք մենք՝ ամենքնիս ալ, ու անոր ազատութեան համար մեր բոլոր արիւնը պիտոր թափենք։

ԳՐԻ. (Ոտէ վրայ ելլելով) Այո՛, այո՛, ես ալ քեզի ձայնակից եմ. չեմ կրնար խղճիս դէմ գործել։ Մաքսիմիանոս կայսեր գրածին հաւատ՞ կընծայէք, այն բոլոր քաղցր խօսքերն միմիայն զմեզ որսալու համար են. այո՛, այն շնիծականաց խօսքերովն կուզէ մեր սրտերն գրաւել և մեր Հայրենիքը մեր ձեռքովն՝ իրեն մատնել... ի՞նչ կըյուսաք դանալ Մաքսիմիանոս կայսեր քով, ազատութի՞ւն. կը խաբուի՛ք, այո՛ կը խաբուիք... եթէ կայսեր այս առաջարկութիւնը կատարել հաճիք, դուք ինքնին յանձն առած կըլլաք գերութիւնը և...։

ՎՀՐ. (Խօսքը ընդհատելով) Հանդարտէ՛, բարեկամ, հանդարտէ. հոս՝ զայրանալու և չափէն աւելի պօռալու հարկ չի կայ. մեր ցունաց կայսրը՝ բռնութեամբ իրեն իշխանութեան տակ ձգել չուզեր, այլ քաղցրութեամբ և ձեր հաճութեամբ։ Դու դեռ անոր բնաւորութիւնը չես գիտեր, սիրելի բարեկամ, միւսները աղէկ գիտեն։ Կայսեր ունեցած թէ ազնիւ և թէ խոնարհ բնութիւնը չեմ կրնար

քեզ բացատրել. իրեն քաղցրահամբոյր բնաւորութեան վերայ ամենն ալ զարմացած են։ Անիկայ՝ որ այն նամակս ձեզ խաւրեց, զձեզ չափազանց կը սիրէ և միշտ ձեր վրայօք աղէկութիւններ կը պատմէ իրեն Նախարարներուն և միւս բոլոր պալատականներուն. իրեն շահուն կամ վատաբարութեան համար չէր որ այս նամակը ձեզ խաւրեց, այլ ձեր վերայ մանաւոր սէր մը ունենալուն՝ ասոր ճշմարտութեանը դուք ինքնին կրնաք վկայել. ինչո՞ւ ուրեմն փուճ տեղը այդպէս կը բարկանաք (աս Ռոսքէն է աս Գրէֆոր) քաջ իշխանք, ինչո՞ւ այդպէս կը բարկանայք այնպիսի մէկու մը դէմ՝ որուն աւ ձեզ ունեցած բարութիւնէն սէրն ամեն ատեն ակներեւ կը տեսնուի։

ՌՈՒ. (Աս Վանդամ) Արդոյ Գերապան, ձգեցէք այդ խօսքերը, վաղը առաւօտուն կը խօսինք այդ նիւթին վրայ. ժամացոյցը եօթը կը զարնէ. ժամանակը անցուկ է... ամենուս վերայ ալ անուշ քուն մը եկաւ, այժմ երթանք նընջելու և դուք ալ հանդիստ ըրէք (Ռինելով Նախարարին աս Վանդամ) ձեզ բարի գիշեր կը մաղթեմ։

ՎՀՐ. Երթաք բարեաւ, Տեարք։

(Ամենն ալ կերթան իրենց սենեակները)։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԼԵՒՈՆ ԱՌԱՆՁԻՆ

Ի՜նչ հանդարտութիւն և ի՜նչ լռութիւն... ամեն արարած ալ ամենայն կենդանի մանկիկ կը ննջեն այժմ. ահա դեռ նո՛ր առաւօտեան թագուհին արուսեակ իր վարդագոյն մատներովն կը բանայ տուընջեան դուռները։ Դեռ նո՛ր կակաչի բնութիւնն արթննալու. ո՜հ, առաւօտուն ի՜նչ քաղցր և զմայլելի տեսարաններ կան արդեօք դիտելու. կամաց կամաց լռութիւնը կը լուծուի, ու կակաչին թռչուններն խումբ խումբ՝ իրենց դաշնակաւոր և ճռուողական գայլայլիկ ձայնով՝ կենաց հայրը՝ զարշալոյս տեսնելու։ Սոխակներն ալ Մասիս լեռան գագաթը՝ կարծես թէ իմ ողբերս նորոգելու համար, Մուսայից ձայնակից՝ Հայաստանի տխուր բաղդը կողբան երգերական ձայնիւ. բոլոր այս առարկաներուն տեսարաններն մարդկային զգացմանց այնպիսի խորին տպաւորութիւն մը կազդեն՝ որ դրեթէ մինչեւ մարդուս ոգի՛ն կը թափանցեն... այսպիսի մեծ, գեղեցիկ և սքանչելի տեսարան մը անտարբեր կը թողո՞ւ արդեօք սիրտ մը... պարզ և անպաճոյճ բնութեան սիրահարի մը համար ի՜նչ զարմանալի տեսարաններ կը բացուին... ..... (Յեռոթը Ճակատին՝ թեւը Հրամանելն Յեպոյ) բայց

ինչո՞ւ այսպէս պանլատին մէկ սրահը քաշուած առանձնացեր եմ, դէպ 'ի դաշտ յառաջանամ և հոն զբօսնում քիչ մը. (պալատէն դուրս հելլայ է՞ դէպ 'ի դաշտ հերնայ) ի՞նչ կարկաչաձայն առուակներ՝ որ լերանց գագաթներէն դէպ 'ի դաշտ կը գահավիժին... ի՞նչ գեղեցիկ և նոր բաւիթիթ ծաղիկներ... այս ջուրէտ և ծաղկաւիթիթ գահը՝ իմին կը գերազանցէ..... ինձ՝ լաւագոյն են աւելի բնութեան ջուրէտ և անպաճոյճ գահն ու ծաղկանց հոյլերէն հիւսուած պսակը, քան թէ կառավարութեան այն թագն ու գահը՝ որոնց վերայ միշտ անպակաս են վիշտ, տառապա՛նք, նեղութի՛ւն և վերջապէս ամեն թշուառութի՛ւն։

Թագաւորի մը վիճակը՝ ո՛րչափ որ նախանձելի է, քառապատիկն ալ անտանելի... հաստատակ մարդ մը կրնայ միայն աշխարհքիս վերայ հանդարտ և անմեղ կեանք մը անցընելու. իսկ թագաւորներն և իշխաններն միշտ աղմուկներու մէջ կը գտնեն իրենց թէ մտաց հանդարտութիւնն և թէ մարմնոյ հանգստութիւնն։ Ո՛ւր էր՝ գիտնայի՛ թէ կայ ուրիշ Լեւոն մը՝ և անոր յանձնէի սիրով իմ թագս ու գահս՝ և հանդարտ կեա՛նք մը անցուցանէի. բայց ի՞նչ. այս պարտքը՝ ինծի համար անհրաժեշտ պարտք՝ քանի որ Հայաստանի վիճակին բարեբաղդութեան և անոր ազատութեան պաշտպանութեանը համար բարձրացեր

եմ այս դահն՝ որն որ ո՛րչափ ալ դժուար ըլլայ՝ թէպէտեւ մահաւոր թ, սակայն պիտի կրեմ... այո՛, սիրո՛վ պիտի տանիմ... Հայրենեաց՝ բարի ծառայութիւններ մատուցանել ուզող հայրենասէր անձ մը՝ պէտք է ամեն կերպ վտանգ, վիշտ, նեղութիւն, աքսորանք, բանտ և վերջապէս թոյլ և մեղկ անձ մը վհատեցընող՝ և բարի ու քաջ հայրենասէր մը քաջալերող մահը յանձն առնէ ու այնպէս զինուի իր հայրենեաց թշնամիներուն դէմ։ Եւ ի՞նչ, ես ալ նոյն կերպով պիտի զինուիմ իմ հայրենեաց թշնամւոյն՝ Մագսիմիանոս բընաւոր կայսեր դէմ՝ եթէ իր առաջարկութիւնը ետ չառնէ և իր խօսքին վերայ պնդէ մնայ։

(Պալատը հեռուն է՝ ոտքը կը փաղաքէ)։

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՆԱԽԱՐԱՐՔ ԵՒ ՎԱՀՐԱՄ

ՎՀՐ. Արդոյ Նախարարք, իմ մեկնելուս ժամանակը կը մերձենայ, մէկ կամ երկու ժամու մէջ՝ ձեր վճռական պատասխանին կ'սպասեմ։ Կայսրը՝ իմ այսչափ ժամանակ յապաղելուս վրայ կարելի է որ բարկանայ. աճապարեցէ՛ք ուրեմն և կարուկ պատասխան մը տուէ՛ք։

Վ.ԱՀ. Քանի՛ որ մէջերնիս անմիութեան կայ, երբէք չպիտի կարենանք վճռական պատասխան մը տալ, և այս կերպով՝ տեղի ունենայ Կայսրը պիտի բարկանէ և Լեւոն թագաւորին տարակուսանաց տեղի պիտի տանք։

ՍԱՀ. Մի՛ կարծէք որ Կայսեր այս առաջարկութիւնը եթէ յանձն չառնենք՝ մեր այս գաղտնի խորհրդակցութիւններս չպիտի յայտնուին. անմիջապէս պիտի յայտնուին և անտառեն թէ՛ Լեւոն թագաւորին և թէ՛ հաստատակութեան աչքէն բոլորովին պիտի ելլանք. ո՞հ, ի՞նչ ամբաստանութիւններ և ի՞նչ զրպարտութիւններ պիտի ելլան մեր վրայօք՝ երբոր այս խորհրդակցութիւններէն մէկ վոքրագոյնը յայտնուի և Լեւոն մեր վրայ կասկածելով՝ սկսի մեր բերնէն խօսք որսալ...։

ՍԱՐ. Ի՞նչ կըսես բարեկամ, միթէ այս առաջարկութիւնը մերժելէն յետոյ՝ պիտի կարենա՞նք վայրկեան մը հանգարտ կենանք վայելել... միթէ այսչափ վա՞տ կը կարծէք դուք Մաքսիմիանոս հզօր կայսրը. անիկայ՝ ո՛րչափ որ երբեւ զաղաւնի՝ միամիտ է, այնչափ ալ իբրեւ զօձ՝ խորագէտ։ Դուք դեռ անոր բնաւորութեանը տեղեակ չէք, և ինչպէս որ կուզէք՝ այնպէս կը դատէք։

ՍԱՀ. Քա՛ջ է։

ՍԱՐ. Ուրեմն պարապ ժամանակ չանցընենք.

շուտով կայսեր նամակին պատասխան մը գրեն.ք և մեր կնիքներովն զմուռն.ք։

ՍԱՀ. Բայց քիչ մը ապասեցէ.ք որպէս զի Ռուբէն և Գրիգոր նախարարաց հաճութիւնն առնեն.ք և յետոյ գրեն.ք. (խօսքը Ռուբէնն է՝ Գրիգոր նախարարաց ուղղեալ) ի՞նչ կը մտածէ.ք, ընկե՛ր.ք, մեն.ք ամեն.քնիս ալ յանձն առնի.ք կայսեր առաջարկութիւնը և հիմայ կուզեն.ք նամակին պատասխան մը գրել. դու.ք ի՞նչպէս կը վճռէ.ք։

ՎԱՀ. Ներեցէ՛.ք բարեկամ.ք, քիչ մը ապասեցէ.ք, հիմայ կուգան.ք. (Ռուբէն է՝ Գրիգոր նախարարներն կատնա՝, ուռանցին աչնէակ մը կը պանի ու կոկբակ ղանոնի համոզելը) խօսեցէ՛.ք, բարեկամ.ք, ինչո՞ւ Մազսիմիանոս կայսեր առաջարկութիւնը չէ.ք ուզեր ընդունիլ։

ՌՈՒ. Ի՞նչ կըսէ.ք, ախր, ի՞նչպէս Հայաստանի գերութիւնը յանձն առնեն.ք. նամակը կարդալու առեն՝ միթէ աղէկ ունկն չի մատուցի՞.ք... այն առաջարկութիւններն կրնա՞ն հայրենաբէր սրտերէն ընդունուիլ... վա՜յ առաջարկութիւն... այն վա՜յ Մազսիմիանոս բրնաւորը՝ կուզէ որ զմեզ երեն դաւաճանութեան զոհ ընէ ու Հայաստան ալ գերութեան լծոյն տակ ճմլէ...։

ԳՐԻ. (առ վանան) Ներեցէ՛.ք, ախր իմ, որ ես այս մասին ձեր մտաց վերայ ունեցած զարմանքն ձեզ խոստովանիմ. դու.ք՝ որ նախարարներէն առաջին հանճարաւորն ու թագա-

ուրին սիրելագոյնը կը հանդիսանաք՝ ինչպէս յանձն կառնուք Մաքսիմիանոս Ցունաց բրնաւոր կայսեր վատ առաջարկութիւնը՝ որ Հայաստանի տարօրինակ վիճակին կը ծառայէ։

ՎԱՀ. Այդ մասին կը սխալիք երկուքնիդ ալ, բարեկամք, միթէ ես Հայաստանի դերութիւնը կուզեմ. քա՛ւ լեցի... եթէ Հայաստան դերի ելլայ, մենք ամենուին ազատ չենք կրնար ելլալ. աշխարհիս մէջ էն յեռին և թշուառ արարած մը իր դերութիւնը չուզեր ընդունիլ. ուրեմն ես՝ որ այսչափ ազատ վիճակի մէջ եմ և կայսեր քով ամենուին երկնչելու տեղ մը չունիմ՝ ինչպէս կընարեմ իմ անձիս ու Հայրենեացս դերութիւնը։

ԳՐԻ. Հապա ինչո՞ւ ուրեմն կընդունիս կայսեր այն առաջարկութիւնը։

ՎԱՀ. Մանիկ ըրէ՛ք որ արդարացի պատճառներով ու փաստերով զձեզ համոզեմ։ Դեռ Մաքսիմիանոս կայսեր դեսպանը նոյն առաջարկութեան նամակը մեզ չէ բերած՝ Ռուսայէն մէկ մտերմագոյն բարեկամէս փոքրիկ նամակ մը ընդունեցի՝ որուն մէջ ինծի ազդ կառնէր թէ «Մէկ քանի տէրութիւններ մըքերնին դրած են՝ Հայաստանի վերայ արշաւել և Հայաստան ընկճել. բայց դրեթէ ամէն մը վերջը մէկը չելլայ, միւսը պիտի յանդգնի ձեր վրայ յարձակելու. վասն որոյ աղէկ զգուշացիր որ ինծի դիմես և դոնէ քուկին անձ-

նական ազատութիւնդ պաշտպանես »։ Ուստի այս տարաձայնութիւններուն նայելով՝ Յունաց Մաղսիմիանոս կայսեր ըրած առաջարկութիւնը մեզի բարեկամութիւն մը կը սեպուի, որ այնչափ արիւնհեղութեանց առաջը կերպով մը կառնէ ու Հայաստան հիմակուընէ աւելի ազատութեան և հանգստութեան մէջ պահել կը խոստանայ՝ եթէ զինքը միայն մեր թագաւոր կամ կայսր ճանչնալ յանձն առնունք. այս դաշինքն ալ չգիտնամ թէ իրեն վատաբերութեան համար է՝ այլ իրեն առ Հայաստան ունեցած մանաւոր սիրոյն համար՝ ինչպէս որ ինքն ալ իրեն ձեռքովն վաւերացուցած է առ մեզ ուղղած նամակին մէջ։

ՌՈՒ. Եթէ միւս տէրութեանց մեր վերայ արշաւելին անհրաժեշտ վճիռ մ՚է, կտրիպուինք բարեկամ, ձեր խօսքերուն տեղի տալ և...

ՎԱՀ. (Խօսքը ընդհատելով) Յարակուսելու հարկ չի կայ, բարեկամ։

ՌՈՒ. Դուք ինչպէս կուզէք, Գրիգոր նախարար։

ԳՐԻ. Հա՝ ալ չեմ կրնար խօսիլ, բարեկամ, լռութիւնը գովելի է։

ՌՈՒ. Ինչո՞ւ համար։

ԳՐԻ. Ալ խօսելու ախորժ մնաց... մինչեւ հիմայ քիչ մը յոյս ունէի Հայաստանի ազատութեան համար... իսկ... (կոկծէ ալ)։

ՎԱՀ. Մի՛ լար, բարեկամ, մի՛ լար, հա

վանդ չի կայ. մեն.ք ամեն.քնիս ալ մեր կեան.քը միշտ Հայաստանի ազատութեան համար զոհելու պատրաստ են.ք ըրեր։

ԳՐԻ. (Ճերմակ Ռաշիենատովը ապէն պրցոնէնեբը ուբէ.ալ) Բայց ի՞նչ օգուտ. Հայաստան այժմ գրեթէ անգութ Ոլկիանեայ խաղալիկ եղած է... ո՛հ, անոր լեռնաձեւ կոհակաց մատնուած է... անոր ազատութեան յոյս մնաց...։

ՌՈՒ. Ո՛չ, ո՛չ, բարեկամ, այդպէս մի՛ խօսիր. դեռ ամեն.քնիս ալ Հայկայ արիւնը կը կրեն.ք. դեռ մեր երակաց մէջ մեր տաք արիւններն պաղած չեն... ամեն.քնիս ալ մեր վերջին շունչը Հայաստանի ազատութեան համար պիտոր տան.ք. ամեն.քնիս ալ անոր ազատութեան սիրոյն համար մեր բոլոր արիւններս պիտոր թափեն.ք՝ որպէս զի Հայաստան ազատ մնայ։ Բայց այժմ հարկը այնպէս կը պահանջէ որ ցունաց կայսեր՝ առ երեսս հնազանդութիւն մը ցուցնեն.ք եւ զայն մեզի իբրեւ տէր ճանչնան.ք՝ մինչեւ որ Հայաստան խաղաղութիւն գտնայ։

ՎԱՀ. Երթա՛ն.ք ուրեմն, բարեկամ.ք, մեր միւս ընկերաց.քով, և կայսեր նամակին պատասխանը գրեն.ք։ (Կը տպնան դռնոյ դանդաղաց ոչնեակը)։

ՎՀՐ. (Կամաց յայնով Վահանին) Ի՞նչպէս ըրի.ք, բարեկամ, կարացի՞.ք զանոն.ք համոզել։

ՎԱՀ. (Ցած յայնով) Այո՛, այո՛, ամեն բան յաջողեցաւ։

ՎՀՐ. Ի՞նչ խորհուրդ ըրի՛ք, քաջ իշխանք, ներեցէ՛ք, շուտով մը պատասխան տուէ՛ք՝ որպէս զի ճանապարհորդութեան պատրաստուիմ։ այս գիշեր չեմ կրնար հոս մնալ. այս օրուան չուս անհրաժեշտ է։

ՌՈՒ. Շա՛տ լաւ, ուրեմն դրեն.ք Կայսեր նամակին պատասխանը. չի յապաղեն.ք՝ որպէս զի չըլլայ թէ Լեւոն իմանայ։

ՎՀՐ. Դո՛ւք դրեցէ.ք ուրեմն, Վահան իշխան, և միւսներն ալ թող զմեզ իրենց կնիքովն։

ՎԱՀ. (Ա. Նոխտարաս) Կընդունի՞ք, ընկե՛ր.ք։

ՆԱԽ. (Ի ժամին) Ա.յո՛, այո՛, ինչպէս որ դրէ.ք կընդունին.ք։

ՎԱՀ. Ա.հաւասիկ կերթամ դրելու։ (Սենեակին ծէկը առանձնանալով կը փրէ նամակը, ու կը կարդայ՝ ի ներքոյ նոխտարաց)։

Օդոստիան եւ Ինքնակալ Տէր.

Ա.ղաչեմ Ձեր Վեհափառութեան դեսպանին հետ ուղղած նամակիս ընդունելինք՝ զոր կարդալով չափազանց ուրախութիւն մը զգացինք։ Վեհափառ Տէր, Ձեր բոլոր առաջարկութիւններն յանձն առինք եւ բանը՝ Լեւոն Ձեր կողմը բերելուն վրայ մնաց։ Թէպէտեւ դեռ Լեւոնի տարակուսանաց տեղի մը տուած չենք, սակայն ամեն կերպով կզգուշանանք՝ որ միւնչեւ դանիկայ Ձեր պալատը բերելու առնենք, մեր վրայ ապահով եւ անվտանգ ըլլայ. որպէս զի հասարակութիւնը անս-

խոով մնայ եւ չի յուզի։ Ձեր՝ հաւատարիմ ծառայքս սապէս խորհեցանք եւ այս միայն դիւրին միջոց գտանք Լեւոնը առ Ձեզ ածելու. ուստի կաղաչենք որ Ձեր Վեհափառութիւնը առ երեսս հաշտութեան նամակ մը գրէ Լեւոնի եւ անոր մէջ նեղրողութիւն խնդրէ անկէ, այն առաջարկութեան համար, եւ զինքը ապահով ընէ այն խորհուրդէն եւ կենալուն վրայ։ Մեզ բոլոր միջոցներն ու հոգերն մեր վրայ թողուցէք։

Մնամք

Օգոստափառ եւ Ինքնակալ Տէառնդ Մարմիմանուսի

ՆԱԽԱՐԱՐՔ ՀԱՅՈՑ

ՎՀՐ. Ի՞նչպէս, հաւանեցա՞ք քաջ իշխանք։

ՆԱԽ. Այո՛, այո՛։

ՎՀՐ. Ուրեմն կնքեցէք՝ որ կայսեր տանիմ։

ՆԱԽ. (Նամակը կը կնքեն ու Վահրամին կու տան) Ահաւասիկ կնքեցինք, առէք և կայսեր տարէք։

ՎՀՐ. Հոս ամէն ուրիշ գործ մը չունիմ, տեսարք, ահա կը մեկնիմ. մնաք բարեւաւ .... մի՛ մոռնաք զիս ...։ (Կը դնէ)։

ՆԱԽ. Երթայք բարեւաւ ... Աստուծոյ նախախնամութիւնը ձեր հետ ըլլայ ...։ Գնաց, մեկնեցաւ, ալ չերեւար ...։

ՎԱՀ. (Մէս-Դոխտրաքնէրուն) Ըլլայ թէ Լեւոնին գաղտնի՛ք մը տա՛ք, ընկերո՛ք, ամենքնիս ալ մէկ սիրտ և մէկ հոգի ունենա՛նք մեր մէջ ... եթէ մեռնիլ հարկ ըլլայ՝ մեռնի՛նք ամենքնիս միասնեալ Հայաստանի ազատութեան համար ...

եթէ ապրինք՝ նոյնպէս միասին՝ Ամո՛ր համար միայն։

ՆԱԽ. (Մէջքէրան) Այո՛, այո՛, ամենքնիս ալ համամիտ ենք։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԼԵՒՈՆ ԱՌԱՆՁԻՆ

Ի՞նչ եղեռնագործ խորհուրդներ կը ծնանին արդեօք այժմ Մաքսիմիանոսի պալատը... ի՞նչ դարաններ կը լարուին արդեօք Հայաստանի համար... այո՛, այո՛, Մաքսիմիանոս ոդի՛ ի բուին կը չանայ Հայաստան գերութեան լծոյն տակ ճնշելու, բայց չի պիտի յաջողի. փառք Երկնից, որոնց խորէն կսկծին փայլել յաջողութեանց քաղցր յոյսերն։ (Քիշմը դպածէ՝ ենք վերջը) ի՞նչպէս պիտի կարենայ այն վատ գազանը Հայաստանի յաղթել, քանի որ իմ Հայրենիքս ինծի հետ միաբան է և նախարարներս ամենն ալ Հայաստանի ազատութեան մէկ մէկ քաջ ախոյեաններ են։ Հոգ չէ որ ես Մաքսիմիանոս կայսեր ունեցածին չափ զօրք չունենամ, վասն զի եթէ պատերազմ հարկ ըլլայ՝ բոլոր հասարակութիւնը կամաւ՝ ի պատերազմ կը դիմեն. մինչեւ անգամ կանայք և մանկտիք յանձն կառնուն սիրով՝ զինուիլ ընդդէմ բռնաւորին՝ թշնամւոյն Հայաստանի

...ահա կու դայ Վահան. տեսնանք թէ ինչ լուր կը բերէ։

ՎԱՀ. Տէր Աստուած, փառք Երկնից. քանի օր է որ լուր մը չեկաւ Մաղսիմիանոս կայսրէն. կարծեմ թէ անիկայ՝ այնպիսի յանդուգն առաջարկութենէ մը ետ կեցաւ։

ԼԵՒ. Կը յուսամ դու, Վահան, որ Մաղսիմիանոս կարենայ իրեն այն յանդուգն առաջարկութիւնը կատարել։

ՎԱՀ. Քա՛ւ լեցի, Տէր իմ։

ԼԵՒ. Միայն այն ատեն կը կասկածիմ Հայաստանի ազատութեան վերայ՝ երբոր տեսնամ թէ մեր մէջ միութիւն չի կայ՝ բայց քանի որ այսպիսի զուգութիւն մը կը տեսնամ նախարարներուս վերայ, չափազանց ուրախութիւն մը տեղի կունենայ սրտիս մէջ և երբէք վհատութիւն մը չի գար վրաս։

ՎԱՀ. Այդ մասին բոլորովին անհոգ եղիր, Տէր իմ. շատ փորձեր ըրի այս միջոցին ու գրեթէ Հայոց թէ բոլոր նախարարներուն և թէ բոլոր միւս գլխաւորներուն սրտերն իրարու համաձայն գտայ. ամենն ալ իրենց անձերն Հայաստանի ազատութեան համար զոհելու պատրաստ են։

ԼԵՒ. Ուրեմն այս օրերուս մէջ յայտարարութեամբ մը հաստատութեան ապդ առնենք թէ «Յունաց Մաղսիմիանոս կայսրը հետ պատերազմ ունենք» պակաս դի խրատչիներ ալ

պատրաստ ելլայ, ու սկսինք հետեւաբար ղօրքերը կարգի դնել ու պատերազմին պէտք եղած պակասութիւններն հոգալ։

ՎԱՀ. Ո՛չ, Տէր իմ. այդ կերպով հասարակութեան հանգստութիւնը կը վրդովենք ու կը յուզենք ու կսկսին ամէնն ալ աղմկիլ և շփոթիլ։ Դեռ միւսանգամ չուզարկեց Մաղսիմիանոս կայսրը՝ իւր դեսպանը և պատերազմի ընտրութեան ազդ մը չբրաւ. պէտք է որ սպասենք ուրեմն՝ կայսեր դեսպանին բերած լուրին և ըստ այնմ սկսինք պատրաստութիւն տեսնալ, թէ որ հարկը պահանջէ։

ԼԵՒ. Բայց չելլայ թէ առանց ազդ ընելու յանկարծակի մեր վրայ յարձակին այն բարբարոս մարդիկներն։

ՎԱՀ. Ո՛չ, Տէր իմ, չեմ կարծեր որ Մաղսիմիանոս յանդգնի այդպիսի խորհուրդ մը յանձն առնելու։

ԼԵՒ. Ինչո՞ւ չես կարծեր. քանի՛ քանի՛ անգամ չի տեսնիր անոր դաւաճանութիւններն ու խարդախ գործքերն։

ՎԱՀ. Ա՛յո՛, այո՛, տեսայ, Տէր արքայ, բայց միթէ անիկայ Հայերը այսչափ վատ պէտի կարծէ. մեր նախնեաց քաջութիւններն զանիա՞լ են անկէ... ո՞չ ապա՛քէն մենք ալ այն քաջաց արիւնը մեր երակաց մէջ կը կրենք... մեղի համար պատերազմիլը քաղցր է՝ որովհետեւ Հայրենեաց քաղցր և սրբազան սէրը մեր սըր-

տերուն մէջ առաջին տեղին դրուած է. իսկ դաւանան Յունաց համար՝ շատ դժուարին է Հայրենեաց սիրոյն համար կեանք զոհել՝ վասն որոյ չեն ընտրեր յանձին պատերազմ. եթէ խարդախութեամբ եւ դաւանանութեամբ յաջողին՝ իրենց մեծ պարծանք մը կը սեպեն. եթէ ոչ՝ իրենց տեղերնին հանդարտ կը մնան։

ԼԵՒ. Ի՛նչ և է, ասիկայ փոքրիկ վտանգ մըն է վերջապէս՝ որուն առաջքն պէտք է առնուլ. քեզ կը թողում, վահան, որ քուկին ճարտարութեամբդ այս վտանգին առաջքն առնուս։ (Կը դնէ)։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՎԱՀԱՆ ԱՌԱՆՁԻՆ

Խնդճ Լեւոն... չգիտեր թէ ի՞նչ որոգայթներ կը լարուին իրեն համար... ինքզինքը ապահովութեան ծոցը կը կարծէ... բայց կը սխալի՛... այո՛ կը սխալի... մէկ քանի օրէն վերջը ի՞նչ անուանելի վիճակի մէջ պիտի ըլլայ... թէպէտ և պէտք չէ որ մէկը իր թագաւորը մատնէ ուրիշի մը, բայց հարկը կըստիպէ... իմին անձնական շահս կամ պատիւս չէ որ զիս կստիպէ զԼեւոն՝ Մադսիմիանոս կայսեր մատնել, այլ Հայրենեաց աղաւաղթիւնը... հասարակաց շահը միշտ պէտք է

անձնականէն վեր դասել։ ։ ։ եթէ Լեւոն թա-
գաւորական իշխանութիւնը Մաքսիմիանոս
կայսեր յանձնէ, ան առեն խաղաղութիւն մը
կը տիրէ։ եթէ ոչ՝ մեծ պատերազմ մը պիտի
ըլլայ Հայոց և Յունաց մէջ տեղ։ ո՛հ ան առեն
ի՞նչ արիւնհեղութեանց պատճառ պիտի ըլլայ
Լեւոն։ Եթէ Լեւոնի ըսենք որ Մաքսիմիանոսի
առաջարկութիւնը սիրով յանձն առնէ, եր-
բէք չպիտի ընդունի մեր աղերսանքն և դրե-
թէ դիս և միւս իմ ընկերներս ամենն ալ իրեն
սխերիմ թշնամի պիտի ճանչնայ ու միշտ զմեզ
պիտի ատէ։ վասն որոյ աւելի ևս լաւ կը հա-
մարիմք որ զայն՝ Մաքսիմիանոսի պալատը
տանինք կերպով մը՝ և հոն իրեն յայտնենք
մեր խորհուրդը և Մաքսիմիանոս՝ Հայոց կայսր
ճանչնալու հաւանութիւնը։ Ի՞նչ, միթէ Լե-
ւոն կը հաւատարի՞ Մաքսիմիանոս կայսեր, թէ
քաջութեան և թէ կառավարութեան մասին։
երբէ՛ք։ Հայաստան՝ ան առեն միայն իր ա-
զատութիւնն ու երջանկութիւնը պիտի գտնայ,
երբ Մաքսիմիանոս կայսրը իրեն վրայ իշխէ։
մանաւանդ Հայոց իշխաններն փառաց ծայրը
պիտի հասնին։ ։ ։ ո՛վ գիտէ թէ կայսրը ինծի
ի՞նչ նուէր պիտի ընէ։ ։ ։ չեմ կրնար դուշակել
կայսեր այն թանկագին պարգեւը զոր ինծի
պիտի շնորհէ։ (Քիչ մը մտածելէն ետքը) Բայց ու-
րիշ պարգեւ չեմ ուզեր։ փառք, պատիւ, ճո-
խութիւնք եւ վերջապէս ամեն կերպ ծանրա-

զոյն պարդեւներն թո՛ղ իմ միւս ընկերայս ըլլան ... զիս միայն թէ մէկ քաղցր անուն մը կրնայ պիտիկ և իմ վիճակիս վերայ գոհ ընել։ Ս.յն անունը զոր կը թոթովեմ ըսելու, ամ, էլի՛ ... զա ... էլիզա ... քանի՛ քաղցր է ինծի քուկին անուշիկ անունդ արտասանել. ամ ո՛ւր էր թէ վայրկեան մը առաջ խորհուրդներս կատարուէին և կարենայի իմ հոգւոյս հատոր՝ միակ սիրուհիս էլիզան տեսնալ ... ամ էլի՛զա, պիտի տեսնամ արդեօք զքեզ քիչ ժամանակէն քու հօրդ հոյակապ պալատին մէջ ... եթէ էլիզա ըսելու ըլլայ՝ թէ իրեն հօրը առաջարկութիւններն սիրով յանձն առի և օր ըստ օրէ ամեն ճիգ և քրտինք կը թափեմ զանազան կատարելու, քանի՞ ուրախ պիտի ըլլայ։ Մադսիմիանոս՝ երբ իմին այսչափ ժրութիւնս ու միանգամայն առ ինքն մատուցած ծառայութիւններս յիշէ, միթէ պիտի զլանայ իրեն էլիզա զուարը ինձ պարդեւելու ... ո՛հ, անիկայ ինծի համար չնաշխարհիկ պարդեւ մըն է ... անիկայ 'ի սկզբանէ անտի իմ սիրոս յաւիտենական է ... առանց անոր՝ կեանքը ինծի դառն է ... ո՛հ էլիզա՛, էլիզա ... չքնաղագեղ էլիզա՛, քուկին սէրդ զիս կը հալէ ու կը մաշէ ... ո՛հ, ո՛ւր էր թէ ... (կը նոաագէ)։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՎԱՀԱՆ, ՎԱՀՐԱՄ

ՎԱՀ. (Մոտենալով) Ո՞վ Աստուած . . . ո՞վէ որ հեռուէն արտաքինթաց կերպով առ իս կը յառաջանայ . քիչ մը մօտենամ, տեսնամ թէ ո՛վ է, կարծեմ թէ զանիկայ պիտի ճանչնամ . ո՛հ, դո՞ւ ես .քաջ դեսպան . ի՞նչ լուր բերիր :

ՎՀՐ. Դուք մէկ .քանի օր առաջ ինչպէս որ վճռեցի.ք՝ նոյն կերպով կայսրէն պատասխան բերի Ձեզ, Տէր իմ. (գրպանէն էջիս նամակ կը հանէ) առէ.ք այս նամակները :

ՎԱՀ. Այս երկու հատն ալ Լեւոնի՞ն են :

ՎՀՐ. Ո՛չ, (Էնկեալէն նամակը էջէն կու գայ) առէ.ք առ նամակը ու նախ ասոր հացէն կարդացէ.ք :

ՎԱՀ. (Կը կարդայ) "Առ սիրեցեալդ իմ և անձկալիդ Վահան իշխան՝ Նախարար Թագաւորին Հայոց՝ Լեւոնի" :

ՎՀՐ. Տէր իմ, Հելլայ թէ կասկած մը ունենաք նուաստս վրայ . ես աղէկ գիտեմ որ Մաքսիմիանոսի դուստրը ձեզ կը սիրէ, ու դուք ալ անշուշտ զանիկայ . հոգ մի՛ ընեք ամենեւին և մի՛ տարակուսիք թէ այդ ձեր սէրը յայտնուի . ես միշտ կը սիրեմ այն անմեղ սէրը՝ զոր երիտասարդ մը և օրիորդ մը իրարու հետ կունենան . թէպէտ դուք Հայ է.ք և Էլիզա՝ Մաքսիմիանոսի դուստրը Յոյն, սա-

կայն հիմակուան օրէնքները թոյլատուութիւն կուտան։ Միթէ Մարսիմիանոս կայսրը իւր դուստրը ձերմէն լաւագունին պիտի կարենայ տալ։ ինչ և է, այժմ ես կը հեռանամ. քիչ մը և դուք Էլիզայի ուղարկած նամակը կարդացէք։ (Կը դնէ)։

ՎԱՀ. Այս նամակը որի՞ն ձեռագիրն է արդեօք։ Էլիզայինս, Էլիզայինս։ ամէս ո՛ւր գնաց որ իրեն հարցունէի... շուտով մը մեկնեցաւ գնաց... երանի է արդեօք ասիկայ... Էլիզա՞ն ինծի նամակ խրկէ՞... բայց ինչո՞ւ սիրտս կը մաշեցունեմ, բանամ կարդամ սիրուհւոյս նամակը և դէթ անոր միսիթարուիմ։

(Կը կարդայ Էլիզայի նամակը)։

Տարիածուդ իմ.

Ամբողջ երկու տարի է որ քուկին սիրովդ վառուած կը բորբոքուիմ... քուկին սէրդ զիս միշտ կը հալէ ու կը մաշէ։ ոչ ուխտադրուժ, ինչու այդչափ անգթութիւն ունիս... ինչու, ըսէ ինծի... մուցանր միթէ այն երջանիկ օրերը՝ յորում Հօրս հոյակապ պալատին պարտէզին մէջ 'ի միասին թեւ թեւի տուած կզբօսնուինք և հոն մեծ զուարճութիւն մը կզգայինք, երբոր առ իրեարս ունեցած սէրերնիս մէկ մէկու կը խոստովանէինք... ամեն բան կանցնի և մոռացութեան վիհին մէջ կը սուզանի կերթայ, բայց սէրը միշտ կը մնայ սրտերուն մէջ, մի միայն զերեզման կրնայ զայն արմատախիլ ընել։

(Այս պեղ Վահանայ աչքերէն արցունքներ կերթան ու կը գոչէ)

Վայ ինձ՝ որ այնպիսի արքայազն դատեր սիրոյն արժանաւորութիւնը չի ճանչցայ ... այո՛, այո՛, Էլիզաս իրաւունք ունիս կշտամբէ զիս ... արժանի եմ կշտամբանացդ ... :

(Կը շարունակէ Նամակը) :

Ներէ՛, ապաշնորհ, որ արտիս չարաբաստիկ սէրը համարձակորէն խոստովանիմ քեզ այս նամակաւս. չմտ ապատեցի ... այո՛, այո՛ չմտ ապատեցի, ամիսներով ... տարիով ... բայց արտիս այսչափ համբերութիւնը արդիւնք մը չունեցաւ ու իբրեւ յուսահատ տարփածու դրիչս ձեռքս առի ու արտէս բղխածը գրեցի ... իմ այսչափ ժամանակ համբերելուս պատճառը ուրիշ բան չէր, բայց եթէ քեզմէն նամակ մը ստանալ ... բայց ինչ օգուտ որ անգութ սիրահար մը ունիմ ... կը զարմանամ քուկին արտիդ անգթութեանը վրայ՝ որն որ օրիորդք անդամ չեն կրնար ունենալ. թէպէտեւ ունենան՝ սակայն այն հպարտութիւններն ու անգթութիւններն առ երեսս՝ սիրտ որսալու նշաններ են՝ որոնց իւրաքանչիւր օր երիտասարդներ զոհ կըլլան : Ալ ինչ գրեմ չեմ գիտեր ... ոհ կաղաչեմ որ դու ալ յառհաւատչեայ սիրոյդ նամակ մը ուղարկես եւ քիչ ատենէն ինձ այցելութեան գաս, եթէ ոչ՝ ճշմարիտ կըսեմ՝ որ այս չարաբաստիկ սիրոյն զոհ մը պիտի ըլլամ եւ ան ատեն դքեզ տուգի մէջ թողլով քուկին անդութ արտիդ մշտնջենական վիշտ մը պիտի նուիրեմ որ խղճէդ միշտ տանջուի ... առաջին ու վերջին խօսքս սիրոյ վրայ է ... սէր կընծայեմ արտիդ ... :

Մնամ

Անձնանուէր սիրոյդ

ԷԼԻԶԱ ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍԵԱՆ

(Նամակը կրկին կրկին անգամ կը կարդայ ու գոցելով կը պահէ) Ո՜հ Էլիզա՛ս, Էլիզա՛ս... ինչո՞ւ այդչափ յուսահատութեամբ գրեցիր... ամէն Էլիզա ներէ սխալանոցս... ես ո՞վ եմ որ ար.քայազն և Հնաշխարհիկ Օրիորդ մը մերժեմ... այն՝ որ աշխարհ.քիս մէջ ամենէն գեղեցիկն է ինձ... (Թէշմը դարձելէն վերջը) ո՞վ երջանկութեան... ո՜հ, միթէ ալիսն տեսնամ գ.քեզ, Էլիզա՛ս, Էլիզա՛ս... (Վանքամ հեռուէն կը պեռնայ ու ցոյնը կը կարդէ)։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՎԱՀՐԱՄ, ՎԱՀԱՆ, ԼԵՒՈՆ, ՆԱԽԱՐԱՐՔ

ՎՀՐ. (Ա՛ Վահան) Ահա՛ւասիկ եկայ, կարդա՛ցի՞ք Էլիզայի առ Զեղ ուղարկած նամակը։

ՎԱՀ. Այո՛, այո՛, բարեկամ, կարդացի. բայց կաղաչեմ որ այս խօսքերը պատեհ ժամանակի մը թողուն.ք ու այժմ կարեւոր խորհուրդներն յառաջացուցնեն.ք. երթան.ք միւս նախարարաց քով ու անդամ մը անոնց հետ խօսակցելով կայսեր նամակը Լեւոնին ներկայացուցնեն.ք։

ՎՀՐ. Շատ լաւ. ուրեմն երթան.ք (Դէպ՝ նախարարաց տուն կերթան ու կոկչեն խօսակցել) Ահա՛ կայսեր խրկած նամակը, Արդոյ նախարար.ք։

ՍԱՐ. Մեր՝ առ կայսր ուղարկած նամակին կը պատասխանէ՞ արդեօ.ք։

ՎՀՐ. Անտարակոյս։

ՍԱՐ. Ուրեմն Լեւոնի ներկայացումնե՞ր։

ՎԱՀ. Կեցի՛ք քիչ մը, բարեկամ՛ք. (ոտէ վրայ կելլէ) Այսօր ամէն բան պիտի լսենայ. մեր այս չափ ժամանակուան աշխատութիւններն ու դաղանի խորհուրդներն այսօր արդիւնաւոր պիտի ըլլան՝ եթէ ամէնքնիս ալ համամիտ և համախորհուրդ ըլլանք ու մինչեւ վերջին վայրկեան թէ Լեւոնի և թէ ուրիշ որ և է մէկու մը դաղանի՛ք չի տանք և ոչ տարակուսանաց տեղի։ Գիտէ՞ք, մեն՛ք որ այսպիսի խորհրդոյ ձեռնամուխ կըլլանք, ուրիշ բանի համար չէ, բայց եթէ Հայաստանի ազատութեանը պահպանութեան և երկու ազգաց խաղաղութեան համար։ Պատերազմը աշխարհիս մէջ ամենայեռին ախտ մ՚է՝ որ մեզ նման եղբարց արիւնը մեր ձեռքով թափել կու տայ. ո՛հ վայրենութիւն մ՚է անիկայ... քա՛ւ լիցի որ մեն՛ք այդպիսի երկնային պատուհաս մը յանձն առնենք՝ քանի որ խաղաղասէր կը համարուինք ու միշտ խռովութիւններն կատեն՛ք։

Ասա՛ այժմ պատրաստ եղի՛ք՝ որ Լեւոնի ներկայանան՛ք և Մաղսիմիանոս կայսեր նամակը իրեն տան՛ք։ Իրեն առջեւ ներկայացած ատենիս՝ ամէն՛քնիս ալ զուարթերես՝ իբրեւ թէ հաշտութեան ուրը դեսպանէն առած ըլլանք։

ՆԱԽ. Քա՛ջ խորհրդածութիւն։

ՎԱՀ. Հա՛ դու՛ք ապատեցէ՛ք ուրեմն, որ ես նախ երթամ Լեւոնի ներկայանամ ու յետոյ

դամ. (կը ծունի ու Լեւոնի ներկայանալով կը գոչէ ուրախ ձայնով) Աւետիս, աւետիս, Տէր Աստուած։

ԼԵՒ. Ի՞նչ կայ. արդեւօք, (զարմացմամբ)։

ՎԱՀ. Վահրամ դեսպանը եկաւ ու Մարսիմիանոս կայսրէն հաշտութեան լուր բերաւ. կայսեր աւ Զեզ ուղարկած նամակը քովն է, ինքը յուղնած ըլլալով սրահին մէկը նստեր է, այժմ ձեզ պիտի ներկայանայ։

ԼԵՒ. Գնա՛ ըսէ որ աճապարէ դայ։

ՎԱՀ. Ահաւասիկ կերթամ. (Վահրամին հով կերթայ ու կըսէ) Օ՛ն, քաջ դեսպան, Լեւոն արքան զձեզ կուզէ. կայսեր նամակը պատրաստ ըրէ որ իրեն տաս։

ՎԱՀ. (Լեւոնի ներկայանալով, դաշն յայտնելով) Մարսիմիանոս կայսրը իմ նուաստս բերնովը կողջունէ զձեզ և այս նամակը աւ Զեզ կը մատուցանէ ձեր խոնարհ ծառային ձեռքովը։ (Նամակը Լեւոնի կուտայ)։

ԼԵՒ. Ես Մարսիմիանոս կայսրէն ամենեւին չէի յուսար այսպիսի վատ առաջարկութիւն մը, բայց ո՞վ գիտէ թէ ի՞նչ պատճառաւ էր. ինչ և է բանաձեւք նամակը և տեսնեմ թէ ի՞նչ է գրեր։ (Կը կարդայ)։

Վատեմարդ Տէր.

Զեզմէն ներողութիւն կը խնդրեմ նախ բաղդին յանցանաց ու երկրորդաբար դեսպանիս յանդգնութեան համար. (այս պէս դեսպանը ամչնալէն գլուխը վար կը ծռէ) Մի միայն երկնային Տէրը գիտէ՝ թէ որչափ

կը սիրեմ եւ սրբան հոգ կը տանիմ Ձեր վրայ։ Այժմ Ձեզ թէպէտ թշնամի երեւցայ, բայց ապագան իմ առ Ձեզ ունեցած սերս մտերմութիւնս պիտի յայտնէ. որչափ որ ջանամ չպիտի կարենամ ինքզինքս արդարացունել, Ձեզ կը խոստովանիմ անցեալին սխալմունքը եւ զձեզ ապագային վրայ ապահով ընելով ձեզմէն ներողութիւն կը խնդրեմ։ Հաւատացէք որ այս նամակս սրտի զղջմամբ գրեցի. քանի՞ լոյսի որ Հայաստանի թագաւորական իշխանութեան աչք տնկած ըլլամ... թէպէտ մէջերնիս փոքրիկ խռովութիւն մը ծագեցաւ, սակայն ես զան դէպքին կուտամ ու երբէք զայն չը յիշելով չեմ ուզեր նաեւ որ դուք յիշէք, եթէ կուզէք որ բարեկամութեան դաշինք կռնենք մէջերնիս։ Այս նամակս խաղաղութեան եւ բարեկամութեան առհաւատչեայ մը թող ըլլայ ձեր քով. կաղաչեմ որ դուք ալ 'ի նշան հաստատութեան բարեկամական դաշանցս՝ սիրոյ նամակ մը գրէք։

ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍ
ԿԱՅՍՐ ՅՈՒՆԱՑ

ԼԵՒ. (Նամակը կարդալէն վերջը սրտաբեկութեամբ կը գոչէ) Փա՜ռք երկնից՝ որ այսօր ինձ այնպիսի բարեկամ մը պարգեւեց, զոր սխալերիս թշնամի կը կարծէի... այն թշնամի կարծած անձը պիտի ըլլայ իմին միակ բարեկամս. այո՛, այո՛, անիկայ պիտի ըլլայ իմ մտերիմս ու օգնականս (առ Վահան) ո՞ւր են միւս նախարարներն, գընա՛ կանչէ զանոնք։

ՎԱՀ. Կերթամ ահա՛ (Կը սրանայ զանոնք + կը կանչէ) Լեւոն արքայն զձեզ կը կոչէ, քաջ ընկերք։

ՆԱԽ. (Լեռնի ներքեւոյնոալով) Ահաւասիկ են.ք, Տէր արքայ։

ԼԵՒ. Քաջ Նախարար.ք մոլիկ ըրէ՛.ք. (Մոքոնոնոս կայսրը նամակը դարձեալ կը կարդայ ու՝ կը գոցէ կը պահէ)։

ՆԱԽ. (Մոքոնոնոսի)։ Խաղաղութի՛ւն... խաղաղութի՛ւն...։

ԼԵՒ. Այսուհետեւ ալ արտաքուստ երկիւղ մը չեն.ք ունենար՝ քանի որ Մաքսիմիանոս կայսրը մեր հետ միացած է։

ՎԱՀ. Տէր Արքայ, հոս՝ երկնային ձեռ.ք մը ըլլալու է... ո՞վ կը յուսար։ (զարմացմամբ)։

ՍԱՐ. Ներեցէ՛.ք, Տէր Արքայ, արժան է որ այս միջոցին Մաքսիմիանոս կայսեր այցելութեան երթան.ք։

ՎԱՀ. (Լեռնի ոտքը ընկնելով) Այո՛, այո՛, Տէր արքայ, կաղաչեն.ք ամեն.քնիս ալ՝ որ ձեր մէջ հաստատե.ք աղէկ մը խաղաղութիւնը, որպէս զի Հայաստան ապահովութեան ծոցը ըլլայ։

ԼԵՒ. Շա՛տ լաւ, սիրելի Նախարար.ք. վաղը կերթան.ք Մաքսիմիանոս կայսեր այցելութեան դուռ.ք ամեն.քնիդ ալ պատրաստ եղի.ք որ դեսպանին հետ երթան.ք՝ ձեր շ.քեղաղարդ դեսպանները հագէ.ք ու աղէկ մը զարդարուեցէ.ք առաւօտուն որ մեկնին.ք։

ՆԱԽ. (Մոքոնոնոսի)։ Կեցցէ՛ Լեւոն արքայ. (կրկնելով կը ծնրդի)։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՎԱՀԱՆ, ՎԱՀՐԱՄ

ՎԱՀ. (Առանձին) Լուսին, իմ ալէկոծ սրտիս ստուերաց մէջ խաղաղութեան նշոյլ մը կաթեցուր... ի՞նչ միայնութիւն... աւաղ դեռ մռայլութեան մէջ է երջանկութիւնս... բայց... ի՞նչպէս կը մոռնայ մարդ իւր կեանքը, ի՞նչպէս կը մոռնայ ծաղիկը իր հոտը, կամ արեւը իր լոյսը, ի՞նչպէս կը մոռնայ երկիր լուսինը՝ որ իր անդունդներուն խորերն անդամ կը թափանցէ և իր լուսաւոր ջահերովը դիշերուան մթութիւններն կը փարատէ ու թշուառաց սրտերուն խորը միխիթարութիւն կը սփռէ, ի՞նչպէս ուրեմն Վահան մոռնայ իր Էլիզա սիրուհին՝ որ իրեն կեանքը, միխիթարութիւնն ու վերջապէս աշխարհքիս մէջ էրեն հանար է՛ն չքնաղ և հնաշխարհիկ էակն է... Սէ՛ր, ի՞նչ քաղցր ես... ամեն բան կը խոնարհեցընես քու առջեւդ... շղթայները կը թեթեւցընես... բա՞նտը, մինչեւ անդամ մահը կը քաղցրացընես... ո՛հ, ամեն օր, ամեն վայրկեան անթիւ երիտասարդներ քեզի զոհ կընես... ո՛հ զի՞ս ալ, զի՞ս ալ արդեօք զոհ պիտի ընես քուկին անդթութեա՛նդ... (Ձեռքը ճակտին դրած) Ո՛հ, դիշերն ալ, կարծես թէ իմին խորհուրդներս յեռաս ընկրկելու

համար՝ կը դանդաղի՛... այս միայնութեան մէջ չի կայ արդեօք ինծի համար մխիթարութիւն մը... ամենն ալ խոր 'ի քուն մոռացած կը ննջեն այս պալատին մէջ... (հեռուէն վանքում կը պեռնայ) ո՛հ եկուր, եկուր, բարեկամ, եկ ուր-վէ զիս. այս միայնութեան մէջ առանձնացեր եմ ու հառաչելով չեմ դտնար մխիթարութիւն մը. ո՛հ, անծանօթ ոգի մը զիս կը տանջէ. վուրթայիր բարեկամ։

ՎՀՐ. Ի՞նչ կայ, Տէր իմ, աճապարեցէ՛ք ըսելու։

ՎԱՀ. Ո՛հ, բարեկամ, սրտիս մէջ անհանգստութիւն մը կզգամ... ո՛հ, Է...լի...զայի սէրը զիս...։

ՎՀՐ. Բարեկա՛մ, ինչո՞ւ այդչափ անմխիթար կը հառաչես ու սիրտդ կը մաշեցնես. քիչ ատենէն պիտի երթաս տեսնալու զԷլիզա. այո, քիչ ատենէն՝ Էլիզայիդ չքնաղադեղ դէմքը տեսնալու բարեբաղդութիւնը պիտի ունենաս. երանի՛ քեզի որ այդպիսի սիրուհի մը ունիս որ զքեզ ամեն կերպով կը մխիթարէ. ինչո՞ւ ուրեմն այսչափ տխրիկ կը տանջուիս ու հառաչանքներ կարձակես։

ՎԱՀ. Ա՛խ, սիրելիդ իմ, չե՞ս դիտեր սրտիս աղմուկը... չե՞ս դիտեր։

ՎՀՐ. Գիտեմ, այո՛ գիտեմ ձեր առ կրեարս ունեցած սէրերնիդ. բայց քա՛ւ լիցի որ մէկու մը յայտնեմ և զձեզ մէկմէկէ բաժնելու պատ-

ճառ ըլլամ. իմ դլխէս ալ անցաւ այդպիսի սիրահարական դէպք մը. այդ մասին խիստ փորձառու եմ։

ՎԱՀ. Ուրեմն, դու իմ մտերիմ բարեկամն ես. եկո՛ւր որ փարուինք, (Վահրամին քիզը կը պաչէ) ա՛խ, սիրելի բարեկամ, սիրաս քեզի միայն կը բանամ. ո՞հ կը սիրեմ այն Օրիորդը ... կը սիրե՛մ... այո՛ կը սիրեմ Էլիզան ... կը սիրեմ այն քաղցր անունը՝ որ դիս կը բոցա-կիզէ ... ա՛խ Էլիզա, Էլիզա ...։

ՎՀՐ. Ես ալ կը հաստատեմ որ նպատակիդ պիտի հասնիս ... երանի՛ քեզի, բարեկամ, որ այդպիսի սիրուհի մը ունիս, այնպիսի արքայական սիրուհի մը՝ որ բոլորով կերպիւ ինքդինքը՝ իրեն կեանքն ամբողջ՝ ու վերջապէս իրեն աղնիւ սիրտը՝ քեզ կը նուիրէ։

ՎԱՀ. Կը կարծե՞ս, բարեկամ, որ Մադմիզանոս կայսրը՝ իր Էլիզա դուստրը ինծի տայ։

ՎՀՐ. Ինչո՞ւ չէ, բարեկամ, բաւական է որ Էլիզա զքեզ սիրէ և քեզմէն սիրուած ըլլայ. Հայրը եթէ չուզէ ալ, քեզի տալ, սակայն պիտի ստիպուի յակամայից երբ որ լսէ թէ իր դուստրը զքեզ միայն կը սիրէ։

ՎԱՀ. Ո՛հ, չըլլայ թէ հայրը իմանալով դիս պատուհասէ և Էլիզա ալ աչքէն ելլայ ... ա՛խ բարեկամ շատ կը տարակուսիմ... այս սէրը մահաբերիթ պիտի ըլլայ արդեօք ինծի ...։

ՎՀՐ. (Խօսքը ընդմիջելով) ժամացոյցը վեցը կը

զարնէ, բարեկամ, ննջելու ատեն է. Հանգրստացէք և քիչ մը քնացէք որ առաւօտուն ճամբու պատրաստութիւն տեսնանք։ (ՄԷՆԵԼԱՎ) Ձեզ բարի գիշեր կը բարեմաղթեմ, Տէր իմ, մնաք բարեաւ։

ՎԱՀ. Երթաք բարեաւ. վաղը առաւօտուն ձեզ կապասեմ։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԼԵՒՈՆ, ԱՐՇԱԿ

ԼԵՒ. (Առանձին) Ահա առաւօտեան ատոլը կելլէ. թռչուններն առաւօտեան գալուստը կաւետեն. մինչեւ առաւօտեան ժամը մէկը պատրաստ ըլլանք, առ Մաքսիմիանոս կայսր դիմելու. բայց կը մտածեմ որ դահս որի՞ թողում, որպէս զի աչալուրջ կերպով հսկէ ժողովրդեան վրայ, մինչեւ որ վերադառնամ. պէտք է հաւատարիմ մէկու մը յանձնել՝ որ հաւատակութեան մէջ խռովութիւն մը տեղի չունենայ. (Քաջիր յոյնով) Ո՞ւր ես Արշակ։

ԱՐՇ. (Նեբիայանալով) Ահաւասիկ եմ, Տէր իմ։

ԼԵՒ. Նախարարներն դեռ կը ննջե՞ն։

ԱՐՇ. Այո՛, Տէր ազնիւ, դեռ կը ննջեն։

ԼԵՒ. Գնա՛ զանոնք արթնցո՛ւր, և ըսէ որ պատրաստ ըլլան մինչեւ ժամը մէկը՝ ճանապարհորդութեան համար։

ԱՐՇ. Շատ լաւ, Տէր արքայ։ (Կերթայ պատենոփն ալ կարենցուանէ եւ կապարէ որ ինչպէս ժամը մէկը երթալու պարտաւորուինք։)։

ԼԵՒ. Գնացէք, Արշակ։

ԱՐՇ. Այո՛, Տէր իմ, գնացէ զանոնք ամենն ալ արթնցուցէ և ապարեցէ որ պատրաստ ըլլան ճանապարհորդութիւն ընելու։

ԼԵՒ. Անմիջապէս գնա՛ ախոռապետին ըսէ՛ որ ինծի սեպհականեալ ընտիր ձիերէն մէկը պատրաստ ընէ։

ԱՐՇ. Կերթամ, Տէր իմ. (կը ծունի ու ախոռապետին ապարելով կու գայ) պատրաստ է, Տէր իմ։

ԼԵՒ. Ո՞ւր են նախարարներս ուրեմն։

ԱՐՇ. (Կը ծունի Դռնապանին կանչելու) Օ՛ն արէ՛ք, Տեարք, Արքային ձեզ կսպասէ։

ՆԱԽ. Լեռնի կը նեղկայանան) Ահաւասիկ ամենքնիս ալ պատրաստ ենք։

ԼԵՒ. Թէպէտ մենք այժմ պիտի երթանք առ Մադսիմիանոս կայսր, սակայն պէտք է որ ձեր մէջէն մէկը դահս դնեմ՝ որպէս զի մինչեւ իմ վերադարձս՝ ժողովրդեան վրայ հսկէ և զանոնք անվրդով պահէ։

ՎԱՀ. Ո՞վ կուզէք, Տէր արքայ, ընտրեցէք որն որ Ձեզ հաճելի է։

ԼԵՒ. Ամենքդ ալ իմ առջեւս հաւասար է՛ք. ո՛վ որ կուզէ թող յանձն առնէ։

ՎԱՀ. (Ցածէն Սարգսի) Դուն յանձն ա՛ռ, դուն յանձն ա՛ռ։

ՍԱՐ. (Յանձն) Լաւ, յանձն կառնեմ։

ԼԵՒ. Ըսէ՛ք ուրեմն. ո՞վ կուզէ յանձն առնել։

ՎԱՀ. Սարդիս նախարարը յանձն կառնէ և մեր մէջ արդէն ամենէն արժանաւորն անիկայ է։

ԼԵՒ. Յանձն կառնե՞ս, Սարդիս։

ՍԱՐ. Եթէ Ձեր վերհանձնութիւնը կը հաճի։

ԼԵՒ. Ուրեմն աղէկ հոգէ ժողովրդեան վերայ (Ռեկնելով) միասնչիր բարեաւ, քաջ նախարար, քեզ տեսնամ թէ ի՞նչպէս պիտի կատարես։

ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Լեւոն իբրեւ նախարարներուն հանդիպիչ Մաքսիմիանոս կայսրէ պալատը կը հասնի)։

ԼԵՒՈՆ, ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍ, ԱՐԻՍՏՈՏԷԼ, ՎԱՀԱՆ, ԿԱՐԱՊԵՏ, ՆԱԽԱՐԱՐՔ

ԼԵՒ. (Ա՛ Մաքսիմիանոս) Փառ.ք մեր տեսութիւնը, Տէր։

ՄԱԳ. (Ա՛ Եւեւս ինդուՙնիւն մը յեւացունելով) Ահաւասիկ խնդիր.ս կատարուեցաւ. մեծապէս շնորհակալ եմ բարեկամ (Լեւոնի յեւոէն քաշելով ղայն կը սեղմէ մեղմօրէն)։

ԼԵՒ. Սրտիս մէջ դողդեմ մշտնջենական խաղաղութիւն մը տիրեց Տէր իմ, երբ որ Ձեր առ իս ուղղած բարեկամական սիրոյ նամակնիդ ընդունեցի. միմիայն յերկնուստ այս բարեկամութիւնը կը խնդրէի ու պարդեւեց։

ՄԱԳ. Ի սկզբանէ անտի կը ցանկայի ձեր հետ բարեկամական դաշինք մը հաստատել. սակայն այժմ միմիայն բարեբաղդութիւն ունեցայ։

ԼԵՒ. Ողջ ըլլաք, Տէր իմ, այժմ առ ձեզ դիմելուս պատճառը ուրիշ բան չէ, բայց եթէ ձեր վեհափառութեան հետ տեսութիւն ընել և մեր մէջը հաստատուած բարեկամական դաշինքը անխախտ պահել. կաղաչեմ Տէր իմ, որ անցեալն տխուր յիշատակներն չը յիշէք. դիտէք, այնպիսի խռովութիւններն՝ որոնք դէպքին արդասիքն են միմիայն, բարեկամութեան սիրոյն աւելի քաղցրութիւն մը կու տան։

ՄԱԳ. Մէկ կողմ թող այժմ այն խորհուրդներն. վերջը այդ նիւթին վերայ պիտի խօսինք. հիմայ ձեր հանդիսութեանը նայեցէք (Ռեինելով կառանիշնանայ սենեակ մը — Սրբոպոպէլ ծառայէն կը՝ որ երբեմն Հայոց նախարարներն կանչէ) դնա՛, Սրիտոտէլ, Հայոց նախարարներն հոս կանչէ։

ԱՐՍ. Կը փութամ զանոնք կանչելու, Տէր իմ. (Երբեմն նախարարաց տով) Տեսէք, կայսրը զձեզ կուզէ տեսնել, հրամայեցէք՝ որ երթանք։

ՎԱՀ. Ո՞ւր է, ո՞ւր է։

ԱՐՍ. Սենեակին մէկը առանձնայեր, ձեզ կապասէ։

ԿԱՐ. Լեւոն արքայն քո՞վն է արդեօք։

ԱՐՍ. Ո՛չ, ոչ Տէր իմ, քիչ մը առաջ երկուքնին 'ի միասին նստած էին. այժմ մէկմէկէ մեկնած են։

ՎԱՀ. Օն երթանք ուրեմն, ընկերներ, առ Մաղսիմիանոս կայսր. (կերթան առ Մաքսիմիանոս կայսր)։

ՄԱԳ. Բարի եկաք, քաջ իշխանք։

ՆԱԽ. (խոնարհելով կայսրը կողջունեն եւ կը գոչեն) Ձեր վեհափառութեան անդին կենացը միշտ բարեմաղթաւ ենք, Տէր։

ՄԱԳ. Ո՛ղջ ըլլաք, քաջ իշխանք. դուք իմ առաջարկութիւնս կատարեցի՞ք. մնաց որ ես իմ խոստմունքներս յառաջացուցեմ։

ՎԱՀ. Մենք ուրիշ առաջարկութիւն և կամ ուրիշ խոստմունք չենք գիտեր, Տէր, միմիայն Ձեր առողջութիւնը կը խնդրենք։

ՄԱԳ. Քա՛ջ Նախարար, չըլլայ թէ Լեւոնը յուսահատական վիճակի մէջ ձգէք. Ջանացէք որ մինչեւ վերջին վայրկեան իրեն աջքէն չելլաք և դինքը կերպով մը հոս բերելնիդ չըլլայ թէ իմացունէք կամ կասկածանաց տեղի մը տաք. միշտ ինքզինքնիդ իրեն առջեւ հաւատարիմ ցուցուցէք։

ՆԱԽ. Այո՛, Տէ՛ր, այդ մասին ամեն զգուշութիւն 'ի գործ կը դնենք։

ՄԱԳ. Այժմ դնացէ՛ք հանգստացէք, քաջ նախարարք։

(Նախարարք խոնարհելով կը ելնին)։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԼԵՒՈՆ, ՊԵՐԻԿԼԷՍ

ՊԵՐ. (Տխուր դէմքով) Ո՞հ, բարեկամ, զքեզ այս վիճակին մէջ պիտի տեսնեմ...։

ԼԵՒ. (Այլայլած) Ո՛վ Աստուած... հոս վտանգ մը կայ՝ զոր չեմ կրնար դուշակել... այո՛, դաղանիք մը ըլլալու է՝ որն որ չեմ կրնար թափանցել...։

ՊԵՐ. Ո՞հ, բարեկամ, առաջուընէ ծանուցի քեզ որ ամենահաւատարիմ կարծածներդ շատ անգամ խարդախ կըլլան ու այնպիսիներն դառան կերպարան մոած մէկմէկ յափշտակիչ գայլեր են՝ որ շատերը իրենց զո՞հ կընեն։

ԼԵՒ. Ո՞վ երկինք... (կայլայլէ)։

ՊԵՐ. Մի՛ այլայլիր, Տէր իմ, վտանգը չի հասած պէտք է անկէ վախնալ ու կասկածիլ իսկ անոր հասած ատենը քաջալերուիլ և զայն մերժել, կարելի է որ միջոցով մը կաղատեմ զքեզ։

ԼԵՒ. Վտանգի մէջ եմ ես։

ՊԵՐ. Մինակ դու չե՛ս։

ԼԵՒ. Հեռու ուրիշ ո՞վ կայ։

ՊԵՐ. Աղդ մը ամբողջ։

ԼԵՒ. Ի՞նչ կըսես, բարեկամ, խօսքերուդ վրայ սեւ քօղ մը կայ ծածկուած ... դաղտնիք մը կայ հոս... ամէս բարեկամ աճապարէ ըսելու...։

ՊԵՐ. Աւա՜ղ որ քուկին պարզութեանդ զոհ եղար. դեռ նախարարացդ վերայ վստահութիւն ունիս։

ԼԵՒ. Թէպէտ այնչափ վստահութիւն չունիմ, սակայն չեմ յուսար որ յանդգնին ինծի որոգայթ մը լարելու։

ՊԵՐ. Դեռ չե՞ս յուսար. նախարարներդ ըղ քեզ Մաքսիմիանոս կայսեր մատնեցին. դու հոս կայսեր մատնուած ես ու դեռ չես գիտեր։

ԼԵՒ. Ի՞նչ, մատնուած եմ ես։

ՊԵՐ. Այո՛, մատնուած ես, բայց լալով և ողբով ժամանակը պարապ չանցունեն.ք. պէտ.ք է հնար մը դտնալ ազատելու Հայաստան. ես իմ անձս .քեզի՝ .քուկին սիրոյդ նուիրած եմ. եթէ մեռնել հանի՝ ես ալ .քեզի հետ եմ։

ԼԵՒ. Ուրեմն ի՞նչ ընելու է։

ՊԵՐ. (Մաքսիմիանոս կայսրը հեռուէն կը գնայ) Պէտ.ք է այժմ մէկմէկէ բաժնուիլ, որպէս զի չըլլայ թէ կասկածանաց տեղի տան.ք Մաքսիմիանոս կայսեր. ահաւասիկ հեռուէն կու գայ (կը մեկնի)։

ԼԵՒ. (Ցած ձայնով) Վերջը ձեզի կապասեմ իմ միակ մխիթարիչ և մտերիմ բարեկամս։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՎԱՀԱՆ, ՎԱՀՐԱՄ

ՎԱՀ. Բարեկամ, արդէն սիրտս քեզի բացեր եմ. քեզի նման բարեկամ մը դեռ չի գտայ Հայոց մէջ. շատ կը ցաւիմ որ մինչեւ ցարդ սիրուհւոյս երեսը տեսնալու բարեբաղդութիւնը չունեցայ։

ՎՀՐ. Նպատակիդ հասնելու բան մը չի մնաց, տէր իմ, կայսրը՝ իր խորհուրդը Լեւոնի յայտնելու և ձեր հաճութիւնը խնդրելու վրայ է. ամեն բան մէկ երկու ժամու մէջ պիտի լմընայ. վայ Լեւոնի՝ որ այն տխուր վայրկեանները պիտի տեսնայ։

ՎԱՀ. Լեւոնի թշուառ վիճակը չեմ հոգար, և ոչ Հայաստանի թագաւորութեան վերայ կողբամ, բարեկամ, մի միայն մշտնջենական ողբ մը ունիմ սրտիս մէջ՝ որ զիս միշտ կաղմկէ և կը յուզէ... կուզեմ որ շուտով մը նպատակիս հասնիմ... այո՛, շատ կը փափաքիմ... բայց կարծեմ թէ շատ խոչնդոտներ կան առջեւս։

ՎՀՐ. Ո՛չ, բարեկամ, ամենեւին խոչնդոտ մը չի կայ առջեւդ. միշտ յաջողութիւն պիտի դտնաս. մանաւանդ ան ատեն՝ երբոր կայսրը իմանայ քուկին այդչափ ժրութիւններդ։

ՎՀՐ. Կայսեր առջեւ այնչափ համարձակութիւն չունիմ որ իմ ժրութիւնս յայտնեմ. գի-

ուէ՛ք, Լեւոնը հոս բերելուն մեծ պատճառը ես եղայ, կաղաչեմ, բարեկամ, որ Կայսեր ա՜կանջը ձգէ՛ք այս բանը, որպէս զի իմ վրաս մանաւոր սէր մը և համարմունք մ'ունենայ։

ՎՀՐ. Այո՛, պիտի խնայունեմ Կայսեր՝ քուկին փոյթդ ու եռանդդ. պիտի չանամ զքեզ իրեն աչքը մտցունելու։

ՎԱՀ. Զեզի նման հաւատարիմ և սիրելի բարեկամի մը սիրտս կը նուիրեմ։

ՎՀՐ. (Պերիկղէս խշխանը հեռուէն պեսանելով) Կաղաչեմ, բարեկամ, որ այժմ լինէ մեկնիլը, ահաւասիկ Պերիկղէս հեռուէն կու գայ։

ՎԱՀ. Մէկ վայրկեանէն վերջը դարձեալ ձեզ կապասեմ։ (Կը մեկնի)։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՎԱՀՐԱՄ, ՊԵՐԻԿՂԷՍ

ՊԵՐ. Ի՞նչ կը խօսէի՛ք Վահանին հետ։

ՎԱՀ. (Թոխուելով) բան մը... չը.. կար... ուէր..։

ՊԵՐ. Ո՛չ, ո՛չ, թոթովելէդ յայտնի է որ ուրիշ դաղտնի նիւթի մը վրայ կը խօսէի՛ք. հոս բան մը կայ՝ զոր կուզես ինձմէ ծածկել. Վահան՝ զիս տեսնալուն պէս ինչո՞ւ անմիջապէս մեկնեցաւ քենէ։

ՎՀՐ. Բայց ինչո՞ւ կը պահեմ ձեզմէն և ու-

ելիշ կասկածանաց տեղի կու տամ. արդէն դուք գիտէք, Վահանայ՝ առ Էլիզա՝ դուստր Մաղսիմիանոսի ունեցած սիրոյն վրայ էր խօսքերնիս. ինձի կը հարցուներ թէ ի՞նչպէս և ի՞նչ կերպով պիտի կարենամ տեսնալ զԷլիզա։ Մէկ քանի օր առաջ Էլիզա նամակ մը խրկեց Վահանին ինձի հետ. այս երկուքնին առաջուընէ մէկ մէկու հետ ունին եղեր այս չարաբաստիկ սէրը. բայց վայ անոնց՝ եթէ կայսեր ականջը իմնայ այս բանը։

ՊԵՐ. Ի՞նչ, ի՞նչ կըսես Վահրամ, աղ խօսքերը երբ կը լսես ի՞նչպէս հանդարտ կը կենաս. Հայ մը պիտի սիրէ Յունաց կայսեր դուստրը՝ որն որ կարելի է թէ Աստուծոյ նախանամութիւնը Յունաստանի թագուհի ընտրէր. ի՞նչ անզգայութիւն . . . կը զարմանամ ձեր մտաց վերայ. միթէ արժան կը դատէ՞ք որ այնպիսի խարդախ մէկը՝ որ այս օրուան օրս ինքզինքը բոլորովին անպատիւ կընէ՝ երբ իրեն Հայրենիքն ու իր թագաւորը Մաղսիմիանոս կայսեր կը մատնէ. այնպիսի մէկը՝ որ իրեն Հայրենիքն ու իր ընիկ Տէրը կը մատնէ և անոնց անհաւատարիմ է, միթէ հաւատարիմ պիտի ըլլայ Յունաց. քա՛ւ լիցի։

Վ.ՀՐ. Ճշմարիտ կըսես, Տէր իմ. նաւատալ ձեզի համամիտ եմ. ի՞նչ պէտք է ուրեմն այն չարաբաստիկ սէրը Վահանայ և արքայադըստեր սրտերէն արմատախիլ ընելու։

ՊԵՐ. Առանց բանը դուրս տարածելու Մաքսիմիանոս կայսեր իմացունել։

ՎՀՐ. Ո՞վ կը համարձակի այդպիսի բան մը կայսեր իմացունելու։

ՊԵՐ. Ես կիմացունեմ. սակայն կրնայ ըլլալ որ վերջը երկուքնին ալ ուրանան առ իրարս ունեցած սէրերնին և տարաձայնողը փոխանակ անոնց՝ իբրեւ մեղապարտ և ամբաստանող զոհուի և 'ի մահ դատապարտուի. ուստի պէտք է որ հաստատուն ապացոյց մը ունենանք ձեռքերնիս. մեր կենդանի վկան կամ ապացոյցը ուրիշ բան չի կրնար ըլլալ, բայց եթէ Վահանայ ձեռքէն նամակ մը առնել առ Էլիզա տանելու ու այնպէս զանոնք կայսեր մատնել իրենց նամակներովը. կրնամ ուրեմն այս բանը յաջողցունել։

ՎՀՐ. Այո՛, այո՛, հոս ապասեցէք հիմայ նամակը ձեզ կը բերեմ. (կը դնէ)։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԼԵՒՈՆ, ՎԱՀԱՆ

ԼԵՒ. (Առանձին) Ո՞հ, ի՞նչ վիճակի կառաջնորդէ զիս արդեօք անգութ բաղդը... այս օրերը՝ իմ աչքիս տխուր կերեւան... այն ի՞նչ խօսքեր էին որ ըսաւ ինծի Պերիկղէս. ի՞նչ, ես մատնուա՞ծ եմ... ով երկի՞նք... ո՞ւր,

ո՞ւր գնացիր արդեօք, բարեկամ՝ որ դիս տա-
ղակոյներէն ազատէիր. նախարարներն դիս
մատնած են Մադսիմիանոսի ու ես յանդէս
բարեկամաբար կը կենակցիմ դեռ անոր հետ
... ո՛վ թշուառութեան... ո՛հ Մայր իմ,
դիս՝ այս աշխարհային նեղութեանց, տառա-
պանաց և վշտաց համար ծնար միայն...
(Վահան հեռուէն կը գնայ) բայց ահա Վահան կու
գայ, տեսնամ թէ ի՛նչ ըսուր կը բերէ։

ՎԱՀ. Ո՛հ բան մը ըսելու է Տէր իմ. ձեր
դէմքը ուժգոյն կը տեսնամ և ձեռքերնիդ
դողդոջուն։

ԼԵՒ. Ասկէ աւելի ի՞նչ անտանելի վիճակ
կրնայ ըլլալ...։

ՎԱՀ. Ո՛վ երկինք...։

ԼԵՒ. Աւա՜ղ՝ որ վերջին շունչս... թէպէտ
ազատ, սակայն թշնամւոյս մատնուած պիտի
տամ...։

ՎԱՀ. (Ինքնին՝ ցած ձայնով) Գաղտնի՛քնիս իմա-
ցեր, բայց ո՞ր անօրէնն ըսաւ արդեօք, (Բարձր
ձայնով առ Լեւոն) ինչո՞ւ այդչափ կը խռովի՛ք,
Տէր արքայ, ի՞նչ է ձեր շփոթութեան պատ-
ճառը, կաղաչեմ ըսէ՛ք... կաղաչեմ... դիս
նախկին հաւատարիմ նախարարդ չե՞ս կար-
ծեր, կը կասկածի՞ս վրայօքս... ո՛հ, ի՞նչ
դառն վիճակ... ա՜խ երկիր բա՛ց վիհդ...։

ԼԵՒ. Միւս նախարարաց վերայ այնչափ
վստահութիւն չունիմ, բայց քու վերայ մաս-

նաւորդէս՝ և դրեթէ խոպան պիտի ունենամ։

ՎԱՀ. Ուրեմն ըսէ՛ք, Տէր, ի՞նչ է ձեր խառ-նվածքեան պատճառը։

ԼԵՒ. Քիչ մը առաջ Պերիկլէս Յոյն իշխանը եկաւ և հետս խօսեցաւ... բայց անոր խօս-քերը իմ սիրտս դառնացուցին վիրաւորեցին և այս պատճառաւ մեծ խռովութիւն մը կղդամ։

ՎԱՀ. Անյոգնակի Յոյնի մը խօսքերուն ամե-նեւին ունին մի՛ մտաւորանէ՛ք, Տէր արքայ, ա-նիկայ երկրի մի՛ տ.ք մը ունի և շատ անդամ առ երեսս բարեկամութիւն ընելով՝ մեծամեծ որոգայթներ կը լարէ. զգուշացէ՛ք, Տէր իմ, անոր թառնաւոր խօսքերէն։

ԼԵՒ. Ո՛չ, այդ մտքին կը պտտիս. մինչեւ յայսօր զինքը փորձած եմ և դրեթէ ճշմար-տախօս գտած եմ և մանաւանդ անկեղծ. չեմ կրնար երբէ՛ք Պերիկլէսի ապատամուա-թիւնն ու անկեղծութիւնը ուրանալ։

ՎԱՀ. Ուրեմն ինչո՞ւ համար վիրաւորեցին քուկին սիրտդ անոր խօս.քերը։

ԼԵՒ. Եթէ լսերս ըլլայ, պիտի զարմանամ և երակայդ մէջ արիւնդ պիտի սառի։

ՎԱՀ. Ըսէ՛ք... (կայլաֆոռնէ)։

ԼԵՒ. Ինչո՞ւ կայլաղունիս, Վահան, ո՛հ, քուկին հաւատարմութեանդ վերայ ալ կը կասկածեցընես զիս... պատրաստէ՛ ունկդ՝ այն ցուրտ խօս.քերը լսելու։

ՎԱՀ. Պատրաստ եմ լսելու։

ԼԵՒ. Մէկ քանի ժամ առաջ Պերիկլէս մի՞այն սա բառերն արտասանեց ու մեկնեցաւ դնա՞ց. «բարեկամ դու հոս Մագսիմիանոսի մատնուած ես. նախարարներդ զքեզ մատնեցին ու դու դեռ չե՞ս գիտեր...»։

ՎԱՀ. Ի՞նչ զրպարտու...թի...ւն... Տէ...ր ... իմ... (ՌՈՄՈՎԷՍՈՎ)։

ԼԵՒ. (Բարկացայր ալ) կը թոթովես ահա՛, վա՜հան, դո՞ւ ալ անոնց խորհրդակից ես։

ՎԱՀ. Ո՛չ, Տէր, ո՛չ. ամենեւին տեղեակ չեմ այդպիսի բանի մը։

ԼԵՒ. Արդէն Հայոց թագաւորներէն ո՞ր հանդիսաւոր կեանք մը վարած է, որ ես չարեմ. մինչեւ ցարդ ամեն տառապանք և ամեն նեղութիւն՝ Հայաստանի սիրոյն համար յանձն առի և մինչեւ մահուան վերջին շունչը պիտի չանամ որ ամեն ճիգ ու աշխատանք թափեմ Հայաստանի համար. կեանքս՝ անոր զոհելը քաղցր է. դերութիւնը՝ անոր ազատութեան սիրոյն համար դարձեալ քաղցր. վերջապէս ի՛նչ որ ձեռքէս կու գայ չի պիտի խնայեմ և 'ի գործ պիտի դնեմ Հայաստանի ազատութեան համար։ Իսկ կարողութենէս վեր եղածը՝ միմիայն երկնային Տէրոջը կը յանձնեմ։

ՎԱՀ. Հանդարտեցէք, Տէր արքայ, երթամ միւս նախարարներուն քով և տեղեկանամ այդ բանին։ (Կը դիմէ)։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՎԱՀՐԱՄ, ՎԱՀԱՆ

ՎՀՐ. Ահաւասի՛կ եկայ դարձեալ, բարեկամ։

ՎԱՀ. Ի՞նչ լուր բերիր։

ՎՀՐ. Բարի լուր. այս առաւօտ ձեր սիրուհին Էլիզայի քովը էի և ձեր գալուստը իրեն աւետեցի. երբ այս աւետիսը ըսեց խնդութենէն չի դիտցաւ զիս ի՛նչ կերպով վարձատրելը։

ՎԱՀ. Ինծի համար ի՞նչ ըսաւ։

ՎՀՐ. Կը ցաւի որ մէկ քանի օրուան մէջ ըղձեզ տեսնալու բարեբաղդութիւնը ունեցած չէ. սակայն կուզէ որ այժմ դէթ նամակաւ մը զինքը մխիթարէք և քիչ ժամանակուան մէջ ալ ձեր տեսութեամբը։

ՎԱՀ. Նամակի՞ս կապասէ։

ՎՀՐ. Այո՛, Տէր իմ, ձեր նամակին կապասէ։

ՎԱՀ. Ո՞հ, չի՞պիտի կարենանք արդեօք մէկզմէկ տեսնալ... մի և նոյն պալատի մը մէջ նամակո՞վ պիտի սիրենք զիրար. կը հաւատամ, բարեկամ, մանաւորապէս անոր համար եկայ ես. անոր սէրը զիս հոս ձգեց. այնչափ ժամանակ հառաչեցի անոր համար, այնչափ ճիգ դարձեցի՝ որ օր մը առաջ ճանապարհորդ ելլանք, որպէս զի հոս գալով կարենամ զինքը տեսնալ, դարձեալ զո՞ւրկ պիտի մնամ անոր տեսութենէն։

ՎՀՐ. Էլիզա ալ ձեզի պէս կը հառաչէ և կուզէ վայրկեան մը առաջ զձեզ տեսնալ, սա-կայն կը վախնայ որ չըլլայ թէ իր նաժիշտանե-րուն տարակուսանաց տեղի մը տայ։

ՎԱՀ. Ուրեմն կաղաչեմ որ վայրկեան մը հոս սպասէք, որպէս զի նամակ մը գրեմ և ձեզ յանձնեմ։ (Կը գրէ)։

ՎՀՐ. Հոս կսպասեմ, գրեցէք. (առանձին) գրէ՛ գրէ նամակը որ տանիմ. բայց որի՞, չեմ գի-տեր խեղճ Վահան. ի՞նչ, Հայ մը Կայսեր դստեր հետ սիրահարի. Հայ չէ՞, միշտ վայրե-նաբարոյ, բռնաւոր և կռուասէր է. արժան է որ մենք Հայոց որոգայթներ լարենք. բայց ահա կու գայ Վահան՝ նամակը ձեռքը բռ-նած. (առ Վահան) գրեցի՞ք բարեկամ։

ՎԱՀ. Ահա՛ ձեռքս է. մտիկ ըրէ որ հասցէն կարդամ «Առ տենչալի սիրուհիդ իմ Էլիզա» չըլլայ թէ մէկու մը ձեռք անցնի այս նամակը, կաղաչեմ որ ուղղակի տանիս իրեն յանձնես։ (Վահրամին կու տայ նամակը)։

ՎՀՐ. Անհոգ եղիր. հիմայ կը տանիմ Էլի-զայի ձեռքը կը հասցունեմ։ (Կը գնէ)։

ՎԱՀ. (Եպեսէն կը պօռայ) Պատասխանին կսպա-սեմ, սիրելի բարեկամ։

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՎԱՀՐԱՄ, ՊԵՐԻԿՂԷՍ, ԼԵՒՈՆ

ՎՀՐ. Ահաւասիկ բերրի նամակը։

ՊԵՐ. (Նամակը կարդա.) Աղէկ գիտե՞ս. իրեն ձեռագի՞րն է ասիկայ։

ՎՀՐ. Այո՛ Տէր իմ, ասանէ՛ք վրան ի՞նչ է գրեր։

ՊԵՐ. Կարդացէ՛, կարդացէ՛. հիմակու հիմակ թող քովս մնայ՝ որպէս զի պատեհ ժամանակի մը մէջ կայսեր ներկայացուցեմ (հեռուէն Լեւոնը կը տեսնայ) այժմ ինծմէն բաժնուէ, Լեւոն թագաւորն հոս կու գայ. վերջը դարձեալ կը տեսնուինք։

ՎՀՐ. Շատ լաւ, Տէր իմ, ահաւասիկ Լեւոն արքայն կու գայ, ես կը մեկնիմ։ (Կը դնէ)։

ՊԵՐ. (Ա՛ռ-Լեւոն) Մօտեցէ՛ք, Տէր իմ, մօտեցէ՛ք. ինչո՞ւ այդպէս կասկածանաց աչքով կը նայի՛ք վրաս։

ԼԵՒ. Քա՛ւ լիցի որ ձեր վրայ կասկածանաց աչքով նայիմ. աշխարհքիս վրայ ձեզմէն զատ ուրիշ ո՞վ բարեկամ ունիմ ինծի։

ՊԵՐ. Տէր իմ, այս աշխարհքիս մէջ ես մի միայն ճշմարտութեան համար ծնայ և անոր համար պիտի մեռնիմ. այո՛ դիտեմ որ օր մը պիտի զոհուիմ իմ այս ճշմարտասէր և աղատամիտ դաղափարիս, սակայն պիտի չանամ

որ միշտ խղճիս թելադրութեան հետեւիմ և ըստ այնմ գործեմ։

ԼԵՒ. Առանց ճշմարտութեան ոչ ոք պիտի կարենայ առաքինութեան շաւղին մէջ ընթանալ. անոնք՝ որ ճշմարտութեան դէմ կը գործեն՝ մարդ կոչուելու արժանաւորութիւն չունին. վասն զի մարդկութեան դէմ կը գործեն։

ՊԵՐ. Բայց դիտէ՞ք, բարեկամ, աշխարհքիս վերայ ընդհանրապէս ճշմարտասէր մարդիկ փառք, պատիւ եւ այլն ուրիշ կերպ աշխարհային զուարճութիւններէ զուրկ կը մնան և գրեթէ միշտ ատելի կըլլան։

ԼԵՒ. Ամոր տարակոյս չի կայ, բարեկամ։

ՊԵՐ. Ուստի, ես՝ որ այժմ ամեն ճիգ 'ի գործ կը դնեմ զՁեզ և ձեր Հայրենի.քը՝ Հայաստան ազատելու, ո՞վ դիտէ թէ ի՞նչ պատուհասներ պիտի կրեմ Մագսիմիանոս կայսրէն....։

ԼԵՒ. Ա՜հ, բարեկամ, քեզի ի՞նչ ըրի որ այսչափ զիս կը սիրես և մինչեւ անդամ քուկին անձդ իմին սիրոյս զոհելու կը պատրաստես։ (Կը պաղաւ Լեւոն Պերենիկէն։)

ՊԵՐ. Ինչո՞ւ այդպէս զարմանալի կերպով կը խօսիս բարեկամ. զձեզ պաշտպանելով չեմ ուզեր երբէ.ք Հայրենի.քս՝ Յունաստան և կայսրս՝ Մագսիմիանոս արհամարհել և մերժել. քա՛ւ լեցի... կը սիրեմ Յունաստան... այո՛ կը սիրեմ իմ քաղցր Հայրենի.քս, կը սի-

բեմ նոյնպէս Մաքսիմիանոս կայսրը, սակայն այժմ՝ որ կուզէ թագաւորական իշխանութիւնդ ձեռքդ առնել՝ անիրաւութիւն է, և ես չեմ կրնար երբէք ճշմարտութեան դէմ գործելով՝ պաշտպանել զանիկայ։

ԼԵՒ. Բարեկամ, մինչեւ յարդ դեռ բան մը չըսաւ ինծի Մաքսիմիանոս կայսրը և նախարարներս ալ զիս իրենց հաւատարմութեան վերայ վստահ կընեն. մանաւանդ Վահան՝ որ չի գիտեր թէ ի՞նչ կերպով խորհուրդ տայ ինծի և իրեն հաւատարմութիւնը յայտնէ։

ՊԵՐ. Ո՛հ, չէ՞ք գիտեր թէ ձեզի համար ի՞նչ դարաններ լարուեցան։

ԼԵՒ. Դեռ անոնցմէ մէկը անգամ չեմ գիտեր...։

ՊԵՐ. Ո՞ր մէկը պատմեմ. առաւօտ մը կանուխէն եկայ և տեսայ որ բարձի մը վերայ նամակ մը կար, առի զայն և կարդացի որ քու նախարարներդ գրած էին առ Մաքսիմիանոս՝ զքեզ դաւաճանութեամբ հոս բերելու համար. անկէ վերջը, որ կայսրը ձեզի նամակ մը գրեց, ուրիշ բանի համար չէր, բայց եթէ ձեր սիրտը որսալու և կերպով մը թագաւորական իշխանութիւնը ձեռքերնէդ առնելու համար. (գէր-պանէն Վահանին — Էնկլա գրած նամակը կը հանէ) կը տեսնա՞ս այս նամակը։

ԼԵՒ. Օ՜յ՛, կը տեսնամ. որի՞ն է։

ՊԵՐ. Հաւատարիմ նախարարներէդ մէկուն է։

ԼԵՒ. Ըսէ՛ք, բարեկամ ո՞ր նախարարին է։

ՊԵՐ. Վահանին։

ԼԵՒ. Որի՞ համար է գրեր։

ՊԵՐ. Մարիկ ըրէ որ հասցէն կարդամ։

ԼԵՒ. Կարդացէ՛ք։

ՊԵՐ. (Կը կարդայ) «Առ տեղնչալի սիրուհիդ իմ Էլիզա» Լսեցի՞ք։

ԼԵՒ. Ո՞վ է Էլիզան։

ՊԵՐ. Մագսիմիանոս կայսեր դուստրը։

ԼԵՒ. Վայ անօրէն Վահան, այդպիսի չարաբաստիկ սէր մ'ալ ունիս... ո՛հ նախարարներս ամենն ալ իրենց գործոց յաջողութեան համար կաշխատին եղեր, բարեկամ, ու ես ամենեւին չեմ գիտեր։ ահաւասիկ նոր կզգամ որ անոնք ինծի դէմ անհաւատարիմ են։ վայ քեզ Հայաստան... վայ քեզի՝ որ կուրանան զքեզ քու զաւակներդ...։

ՊԵՐ. Ժամանակը պարապ տեղը չանցընենք, Տէր իմ, ես այժմ Մագսիմիանոս կայսեր պիտի ներկայանամ և Ձեզի համար ազատութիւն պիտի խնդրեմ։ այժմ Ձեզ ուրիշ բան չի մնար, բայց եթէ պատրաստ ըլլալ դէպ 'ի Հայրենիքդ՝ ապահովութեան ծոցը երթալու համբերելու։

(Կը դնէ)։

ԱՐԱՐՈՒԱԾ Ե·

ՏԵՍԱՐԱՆ Ա·

ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍ, ՊԵՐԻԿՂԷՍ

ՊԵՐ· (Ա՛ռանձին) Խե՛ղճ Լեւոն, ողբալի վիճակի մը ենթակայ եղար . . . ա՛լ ազատութեան յոյս կայ միթէ . . . ո՞հ, ո՛րչափ կը ցաւիմ . . . բայց ի՞նչ օգուտ որ իմ նամակիս ունկնդիր չեղար և քուկին անօրէն նախարարացդ մատնութեան զոհ եղար . . . պիտի կարենամ արդեօք ազատել զԼեւոն . . . (Մոգոէիանոս կայսրը պարտէզին մէջ կը պեռոյ) բայց ահա կայսրը պարտէզը ժուռ կուգայ, երթամ ուրեմն իրեն քով և աղաչեմ Լեւոնի համար, կարելի է որ դիմալով ազատութիւն շնորհէ և իշխանութիւնը ձեռքէն չառնէ· (առ Մոգոէիանոս) Տէ՛ր իմ, Ձեր վերհափառութեան խնդիրք մը ունիմ։

ՄԱԳ· Խօսէ՛։

ՊԵՐ· Կաղաչեմ, Տէր իմ, մի՛ բարկանա՛ք . . .

ՄԱԳ· Դեռ ըսածդ չեմ դիտեր· ըսէ՛։

ՊԵՐ· Կաղաչեմ որ Լեւոնի ազատութիւն շընորհէ՛ք և . . .

ՄԱԳ· Լռէ՛, Պերիկղէս, դիս բարկութեան մի՛ շարժեր։

ՊԵՐ· Կաղաչեմ, Տէր իմ, Աստուծոյ սիրոյն համար ըլլայ։

ՄԱԳ. Կը զարմանամ, քուկին ոգիտութեանդ վերայ. Հայոց նախարարներն Յունաստանի բարեբաութեան համար այնչափ հոգ կը տանին, ու դու ընդհակառակը չես ուզեր որ Հայրենեացդ վաստ.քն ուենայ։

ՊԵՐ. Ներեցէ.ք, Տէր իմ, ներեցէ.ք համարձակութեանս, Հայոց նախարարներն ուրիշ բանի համար չեն աշխատիր՝ բայց եթէ իրենց անձնական շահուն համար... այնպիսիներն մարդկութենէ դուրս կը սեպեմ, քանի որ այս օրուան օրս իրենց հայրենի.քը և իրենց թագաւորը կը մատնեն, ի՞նչ, միթէ անոն.ք՝ որ իրենց հայրենեաց և իրենց բնիկ տիրոջ հաւատարիմ չեն՝ Յունաստանի և Ձեզ հաւատարիմ պիտոր ըլլան...։

ՄԱԳ. Ընտանեաց մէջ ճշմարտութիւն մը չեմ նկատեր։

ՊԵՐ. (Ինքնին ցած ձայնով) Որովհետև տկանջիդ անհաճոյ կը հնչեն ընտանեաց. (առ Կայոս) դեռ չկարացի՞ զձեզ համոզել, Տէր։

ՄԱԳ. Ընդունայն խօս.քերով ժամանակ անցունել չեմ ուզեր։

ՊԵՐ. Ահաւասիկ Լեւոն հոս կու գայ, Տէր իմ։

ՄԱԳ. Ուրեմն դու .քովէս մեկնէ շուտով։

ՊԵՐ. Ահա կը մեկնիմ։ (Կը դիմէ)։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍ, ԼԵՒՈՆ

ՄԱԳ. Ո՞ւրկէց կու գաք, բարեկամ։

ԼԵՒ. Բաւական ատեն մարդագէտներուն վերայ ժուռ եկայ և ուզեցի դարձեալ պալատը վերադառնալ։

ՄԱԳ. Ուզածիդ պէս վայելէ այս պալատին մէջ. բաւական ատեն հոս պիտի մնաս, հոգմի՛ ըներ, Հայաստան ապահովութեան ծոցն է։

ԼԵՒ. Քիչ ժամանակուան մէջ պէտք է որ մեկնիմ Հայաստան երթալու համար. ամեն մարդու գործ չէ Հայաստանի վերայ խշխելը և զայն կառավարելը։

ՄԱԳ. (Ցած ձայնով առանձին) «Չեմ ուզեր մէկէն 'ի մէկ յայտնել արտիս խորհուրդը, երբ որ ալ ըլլայ պիտի կատարեմ, սակայն այժմ չի յայտնեմ»։ (առ Լեւոն) Ինչո՞ւ այդպէս կը խօսի՛ք, բարեկամ, հանդիսաւ չէ՞ք հոս։

ԼԵՒ. Շատ հանդիսաւ եմ. ասոր համար չէ...։

ՄԱԳ. Հապա ուրիշ ի՞նչ կայ. ինչո՞ւ այդպէս կը խօսի՛ք, բարեկամ։

ԼԵՒ. Ա՛խ, բարեկամ իմ սիրելի, արտիս մէջ կասկած մը կայ...։

ՄԱԳ. Ի՞նչ կասկած։

ԼԵՒ. Ո՛հ, բերանս յառաջ չերթար ասելու։

ՄԱԳ. Ըսէ՛ք, բարեկամ, ըսէ՛ք։

ԼԵԻ. (Ա՛ռանձին) Ո՛վ Աստուած . . . ի՞նչ ըսեմ . . . ո՞ւ կապշիմ, չեմ գիտեր ի՞նչ ընելս (առ Մաքսիմիանոս) ներեցէք՝ ցէր իմ, մի՛ հարցունէք սրտիս ազմուկը։

ՄԱԳ. Կը վախնամ թէ Հայաստան չեմ կրնար երթալ . . . եթէ կուզես ազատ ես երթալու։

ԼԵԻ. Ո՛չ բարեկամ, սրտիս ազմուկը այդ չէ։

ՄԱԳ. Ուրեմն ի՞նչ է։

ԼԵԻ. Գիշերը զարհուրելի երազ մը տեսայ և սրտիս մէջ տակուրմ մը տիրեց . . .։

ՄԱԳ. Երազներո՞ւն ալ կը հաւատաս, բարեկամ, ամենեւին մի՛ տակար, երազները ցնորք են ու մարդս կը խաբեն. հանդիստ եղիր բարեկամ, սենեակդ առանձնացիր։ (Կը մտնի)։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԼԵԻՈՆ ԱՌԱՆՁԻՆ

Ո՛հ, նոր կիմանամ որ Մաքսիմիանոսի մատնուած եմ . . . խօսքը բերնին վրայ է ու դիս կը խաղցունէ . . . այո՛, այո՛, դարձեալ մի և նոյն վատ առաջարկութիւնը պիտի ընէ ինծի, բայց մէկէն 'ի մէկ չի համարձակիր . . . ո՛հ անօրէ՛ն նախարարներ, դիս մահուան դուռը հասուցի՛ք . . . Հայաստան դերութեան լծոյն տակ պիտոր ճնշուի . . . բայց դո՛ւ վա՛հան, շողը քորդ վահան՝ որ մի միայն Մաքսիմիա-

նուն հաւատարիմ եւ, իսկ ինծի ու Հայրենեացդ միշտ անհաւատարիմ՝ պիտի հանին նպատակիդ... ահ, ո՛ւխտադրուժ, կուզես Հայաստանի՝ քուկին դժբաղդ մօրդ արիւնը ծծել խուժադուժ աղջկան մը համար... այն պիտի աղջկան մը համար՝ որ այսօրուան օրս անիծիւ արքայազն երիտասարդներ իրեն չարաբաստիկ սիրուն զոհ ըրեր է... ո՛հ, ամօրէն, քուկին կամենաուն մայրդ այնպիսի եղեռնագործ օրիորդի՞ մը կը փախես...։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԼԵՒՈՆ, ՄԱԳՍԻՄԻԱՆՈՍ, ՎԱՀԱՆ, ԶՕՐԱԿԱՆԵՔ

ՄԱԳ. Հոս դալուդ պատճառը գիտեմ։

ԼԵՒ. Ա՛լ համբերութիւնս հատաւ... գիտեմ, ո՛ւխտադրուժ, գիտեմ որ դաւաճանութեամբ զիս մատնել տուիր քեզի...։

ՄԱԳ. Մահուան մ՚աճապարեր, Լեւոն, գիտցիր՝ որ ցունաց Մագսիմիանոս կայսեր հետ կը խօսիս։

ԼԵՒ. Ընկրաւ, դու ալ գիտես, որ ես քեզի նման վախկոտ դաղաններէն երբէք չեմ վախնար. մահը՝ ճշմարիտ Հայու մը համար՝ անմահութիւն է. մի միայն դաւաճան ցոյները կը վախնան անկէ։

Ф. Ц.
№ 3448